Azg
Ազգ
13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007 ՀԻՆԳՇԱԲԹԻ 166 (3818)

Վաշինգտոնում քննարկվում է Իրանի ռմբակոծման հարցը

ԱՄՆ վարչակազմն սկսել է քննարկել Իրանի ռմբակոծման հարցը: «Ֆոքս Նյուզ» հեռատեսալիքի տվյալներով, որոշումն ընդունվել է, երբ Գերմանիան անցյալ շաբաթ հավանություն չտվեց հակաիրանական պատժամիջոցների շարունակմանը:

Նախագահ Ջորջ Բուշի շրջապատի աղբյուրներ վկայակոչելով՝ «Ֆոքս Նյուզը» հաղորդում է, որ բոլոր մակարդակներով քննարկվում է Իրանի դեմ առաջիկա 8-10 ամիսներին ռազմական գործողություն ձեռնարկելու հարցը:

Քննարկվող առաջին տարբերակը ենթադրում է Իրանին բենզինի մատակարարումների շրջափակում եւ իրանական նավթի արտահանության դադարեցում: Բայց մասնագետները կարծում են, որ նման քայլերը կվնասեն ավելի շատ Իրանի ժողովրդին, քան նախագահ Մահմուդ Ահմադինեժադի վարչակազմին:

Երկրորդ՝ առավել հավանական տարբերակն Իրանի լայնածավալ օդային ռմբակոծումներն են:

Խորհրդարան-կառավարություն հարց ու պատասխաններից

Երեկ ՀՀ Ազգային ժողով եւ կառավարություն ավանդական հարց ու պատասխանի ժամանակ հերթագրված պատգամավորների թիվը 3 տասնյակ էր: Հնչած հարց ու պատասխաններից հետաքրքրականները ներկայացնում ենք «Ազգ»-ի ընթերցողներին:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ իշխանությունները տարածաշրջանում ռազմական հավասարակշռության պահպանման լրացուցիչ միջոցներ են ձեռնարկել



«ԼՂՀ խնդրում որեւէ նոր զարգացում չկա: Այս շաբաթվա ավարտին Հայաստան կժամանեն ԵԱՀԿ ՄԽ համանախագահները, որոնք հանդիպելու են ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարների հետ: Նոր զարգացումների պարագայում հանրությունը կտեղեկացվի: ԼՂՀ անվտանգությանը ոչինչ չի սպառնում այսօր, նույնիսկ հաշվի առնելով Ադրբեջանի ընդհանուր զարգացումը նավթային գործոնի շնորհիվ», վստահեցրեց ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը ի պատասխան պատգամավոր Մհեր Շահգելդյանի հարցի: Վարչապետը հավելեց, որ Ադրբեջանի ղեկավարների ցանկությունները չեն իրականանում. «Նախանցյալ տարի Ադրբեջանի նախագահը հայտարարեց, որ 2007-ին երկրի բանակը կունենա այնքան բյուջե, որքան Հայաստանի հանրապետությունը, եւ խոսում էր միլիարդներից: Ցիաջողվեց բնականաբար: ՀՀ կառավարությունը նպատակ ունի ՀՀ ԱԺ հետ 2008-ի համար ապահովել համարյա 2,5 միլիարդանոց բյուջե եւ պաշտպանության ծախսերը լինելու են մոտավորապես այնքան, որքան ՀՀ բյուջեն էր 1998 թվականին: Տեղեկություններ ունեմ, որ Ադրբեջանի 2008-ի բյուջեն լինելու է 6-6,5 մլրդ դոլարի սահմաններում եւ փորձում է պաշտպանության նախարարությանը հատկացնել 1 մլրդ դոլարի հավասար բյուջե»:

Սերժ Սարգսյանը նաեւ վստահեցրեց. «ՀՀ ղեկավարությունը ձեռնարկել է լրացուցիչ միջոցառումներ տարածաշրջանում ռազմական հավասարակշռությունը պահպանելու համար»: Վարչապետն ի վերջո հայտարարեց. «Հայաստանում կան անձինք ու քաղաքական ուժեր, որոնց համար ԼՂ խնդիրը քոռ կոպեկի արժեք էլ չունի եւ նրանք կարող են ուրախ լինել, եթե տարածաշրջանում սկսվի զինված բախում եւ, Աստված մի արասցե, մենք անհաջողություն ունենանք, բայց ես էլ գիտեմ, դուք էլ գիտեք, որ նման բան չի լինի»:

Տես էջ 3

Հզոր երկրաշարժ Ինդոնեզիայում

8.2 մագնիտուդ հզորության երկրաշարժ է տեղի ունեցել Ինդոնեզիայում: Երկրաշարժը տեղի է ունեցել Սումատրա կղզու մոտակայքում: Երկրաշարժին հաջորդել են մի քանի ուժեղ ցնցումներ: Հաղորդվում է, որ երկրաշարժը ցունամի է առաջացրել: Հնդկական օվկիանոսի ափամերձ երկրներում տագնապ է հայտարարվել: Հիշեցնենք, որ 2004 թ. երկրաշարժի հետեւանքով առաջացած ցունամիին զոհ էր գնացել 220 հազար մարդ:

Արեւմուտք-Արեւելք մշակութային կենտրոն Բելգիայում

Արտգործնախարար Վարդան Օսկանյանը Բրյուսելում կմասնակցի «Պողոսյան հիմնադրամի» կողմից Villa Empain պալատի վերականգնողական աշխատանքների մեկնարկի արարողությանը: Միջոցառումը տեղի կունենա նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Բելգիայի Սենատի նախագահ Արման դե Դեկարի բարձր հովանու ներքո:

Շվարցենեգերի վետոն

Կալիֆոռնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերը վետո է դրել նահանգային խորհրդարանի այն որոշման վրա, ըստ որի հանրաքվե պետք է անցկացվեր Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման հարցով: Ըստ այդ որոշման, փետրվարի 5-ին, Կալիֆոռնիայում, այսպես կոչված, «փրայմերիզ»-ի անցկացման ժամանակ քվեարկության պետք է դրվեր՝ «Արդյոք դուք համաձա՞յն եք, որ Իրաքից անմիջապես սկսվի ամերիկյան զորքերի ապահով եւ կանոնավոր դուրսբերումը»:

«Կիպրոսի միակ թշնամին թուրքական բանակն է»

Կիպրոսի նախագահ Տասոս Պապադոպուլոսը հայտարարել է, որ կղզու ժողովրդի միակ թշնամին թուրքական զավթիչ բանակն է: Նա հայտարարել է, որ կիպրոթուրքերի առաջնորդ Մեհմեդ Ալի Թալաթի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ խաղաղության համար անհրաժեշտ քաղաքական կամքի դրսեւորում թուրքական կողմից չի տեսել:

Դոլարի անկումը շարունակվում է

Եվրոմիության ֆոնդային շուկաներում դոլարի փոխարժեքը շարունակում է անկում ապրել: Լոնդոնի ժամանակով առավոտյան ժամը 8:00-ին եվրոմիությունում 1 եվրոյի դիմաց տալիս էին 1,3879 դոլար: Դրանով իսկ ԱՄՆ-ի արժույթի փոխարժեքն հասել է մինչեւ պատմական նվազագույնի: Նախկին ռեկորդը գրանցվել էր ընթացիկ տարվա հուլիսի 24-ին, երբ եվրոն արժեր 1,3852 դոլար:

Հայ փոխքաղաքաղաքացի Ռայդում

Ավստրալական Ռայդ քաղաքի խորհուրդը փոխքաղաքացի պաշտոնում ընտրել է Սարգիս Եդիլյանին: Իսկ քաղաքացի է վերընտրվել Այվեն Փեյջը:

Ռայսը Ստամբուլում

ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Սեն Մաքքորմակը հայտարարել է, որ Կոնդոլիզա Ռայսը Իրաքի հարցի շուրջ քննարկումների շրջանակում մտադիր է հանդիպել Իրանի եւ Սիրիայի արտգործնախարարների հետ: Իրաքի հարեւան երկրների հավաքն ավելի վաղ տեղի է ունեցել Եգիպտոսի Շարմ էլ Շեյխ քաղաքում:

Ամերիկյան անկյուն Վանաձորում

Երեկ ԱՄՆ-ի դեսպանատան աջակցությամբ բացվեց Վանաձորի ամերիկյան անկյունը: Այս անկյուններն աշխարհի տարբեր երկրներում գործող փոքրիկ գրադարաններ են, որտեղ գտնվում են ԱՄՆ-ի մասին պատմող անգլերեն գրքեր: Նման անկյուններ կան Երեւանում ու Գյումրիում: Հոկտեմբերի 1-ին նմանատիպ մի անկյուն էլ կբացվի Կապանում:

ՎԱՆԴԱԼԻԶՄ ԲԱԲՎԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Ադրբեջանցիների հերթական բարբարոսությունը

Բաքվում նոր ճանապարհ կառուցելու պատրվակով ավերվում է Նարիմանյան կոչվող գերեզմանատունը, որտեղ հիմնականում թաղված են հայեր, վրացիներ, ռուսներ եւ հրեաներ: Այդ գերեզմանատունը հայտնի է նաեւ Հայկական կամ Մանտինյան անունով: Բաքվում Ռուսաստանի դեսպանատուն են դիմել մեծ թվով ռուս բնակիչներ՝ բողոքելով այդ բարբարոսության դեմ: Թեեւ Բաքվի իշխանությունները հավաստիացնում են, որ ամեն ինչ ընթանում է օրենքի սահմաններում եւ տեղի է ունենում վերաթաղում, իրականում գերեզմանները եւ գերեզմանաքարերը ավերվում են բուլդոզերներով:

Իրանը հերքել է հրաժարականի մասին լուրերը

Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթաքիի պաշտոնաթողության մասին հաղորդումները չեն համապատասխանում իրականությանը: Այդ մասին հայտնել են Իրանի ԱԳՆ-ի մամուլի վարչությունից: Հաղորդվել է, որ տարածված տեղեկությունը անհիմն է, եւ արտգործնախարարությունը քննություն է անցկացնում «Ֆարդա» լրատվական գործակալության տարածած հաղորդագրության կապակցությամբ:

Ի պաշտպանություն 106-րդ բանաձեւի

ԱՄՆ-ի Հայ Դատի գրասենյակից հաղորդում են, որ կոնգրեսմեն Էդվարդ Մարքեյը կոչ է արել Ներկայացուցիչների պալատի իր գործընկերներին ընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը: Հաղորդվում է, որ բանաձեւը պաշտպանելու մասին հայտարարել է արդեն 226 կոնգրեսական:

Կապերը խզել ADL-ի հետ

Մասաչուսեթս նահանգի Նյուտոն քաղաքի «Մարդու իրավունքների հանձնաժողովը» որոշել է քաղաքապետից պահանջել անմիջապես դադարեցնել «Ընդդեմ զրպարտությունների լիգայի» (ADL)-ի կողմից հովանավորվող «Ընդդեմ ատելության» ծրագրի հետ վաղեմի համագործակցությունը: Որոշման պատճառն այն է, որ հիշյալ կազմակերպությունը խուսափում է հստակորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանը նոր փոփոխությունների շեմին

ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Երեկ աշխարհի լրատվամիջոցները հաղորդագրություն տարածեցին Ռուսաստանի կառավարության հրաժարականի մասին: Վարչապետ Միխայիլ Ֆրադկովը իր հրաժարականը հիմնավորեց նախագահին չկաշկանդելու ցանկությամբ, որպեսզի վերջինս կարողանա քաղաքական իրադարձություններից առաջ ազատություն ունենա կազմավորելու իշխանական նոր համակարգ: Հիշեցնենք, որ Ռուսաստանում սպասվում են խորհրդարանական եւ արդեն նախագահական ընտրություններ, որոնք հաստատես կարեւոր են երկրի զարգացման հեռանկարի համար: Ռուսաստանի նախագահը շնորհակալություն հայտնելով Ֆրադկովին կատարած աշխատանքի համար, խնդրել է նրան շարունակել վարչապետի պարտականությունները, մինչեւ նոր կառավարության ձեւավորումը: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Վլադիմիր Պուտինը վարչապետի պաշտոնում առաջարկել է երկրի ֆինանսական մոնիտորինգի ծառայության ղեկավար Վիկտոր Զուբկովի թեկնածությունը: Վերջինիս ղեկավարած գերատեսչությունը զբաղվում է ֆինանսական հոսքերի վերահսկմամբ եւ դրանց սուգմամբ: Զուբկովը քաղաքական գործիչ չէ, նա, ինչպես եւ նախկին վարչապետ Ֆրադկովը, համարվում է տեխնոկրատ, որի նշանակումը քաղաքական դաշտում լուրջ փոփոխություններ չի առաջացնի: Հայտնի է, որ Վիկտոր Զուբկովն, այսպես կոչված, սանկտպետերբուրգյան թիմից է, հետեւաբար նրա նշանակումը առանձնապես զարմանք չի հարուցում, այնուամենայնիվ կան հարցեր, որոնք որոշակի պարզաբանումներ են պահանջում:

Վիկտոր Զուբկով

Եվ այսպես, ինչ կարող են նշանակել Ֆրադկովի հրաժարականը եւ Զուբկովի նշանակումը ընտրություններից մի քանի ամիս առաջ: Հիշեցնենք, որ այս տարվա դեկտեմբերին Ռուսաստանում ընտրվելու է թվով 5-րդ Պետական դուման: Այս իրադարձությունն արդեն իսկ պատմական է, քանի որ Ռուսաստանի պատմության մեջ 5-րդ Պետական դուման չի եղել, Ցարական Ռուսաստանում 4-րդ դուման լուծարվեց դեռ 1917-ին, որին հաջորդեց խորհրդային տարիների երկարատեւ ընդմիջումը մինչեւ քաղաքական նոր համակարգի ձեւավորումը: Սակայն կարծում ենք, որ Պուտինը դիմում է նման քաղաքական քայլի ոչ թե տուրք տալով պատմական իրադարձություններին, այլ պատրաստվում է նոր քաղաքական իրավիճակին, որը կարող է ձեւավորվել նոր խորհրդարանի ընտրություններից հետո:

Տես էջ 2

ԱԶԳ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

«Հայաստանը կարող է դառնալ տարածաշրջանում էներգիայի վաճառքի լավ հրապարակ»

Կարծիք հայտնեց «Հայռուսգազարդի» գլխավոր տնօրենը

«Հայռուսգազարդի» 10-ամյակին նվիրված տոնական միջոցառումներ երեկ սկսվեցին ընկերության գլխավոր մասնաճյուղում տեղի ունեցած տնօրենների խորհրդի նիստով, որին մասնակցում էին երկրի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը, ինչպես նաեւ ընկերության հիմնական բաժնետեր ռուսական «Գազպրոմի» բարձրաստիճան ներկայացուցիչներ: Նիստի ավարտից հետո «Գազպրոմի» վարչության փոխնախագահ, «Հայռուսգազարդի» տնօրենների խորհրդի նախագահ **Վալերի Գոլուբեւն** ու «Հայռուսգազարդի» գլխավոր տնօրեն **Կարեն Կարապետյանը** հանդիպեցին լրագրողների հետ:

Վալերի Գոլուբեւն անդրադարձավ «Հայռուսգազարդի» անցած 10 տարիների հիմնական ձեռքբերումներին: Դրանցից առաջինը նա համարեց Հայաստանի գազաֆիկացման ցուցանիշը, որը, նրա կարծիքով, մեծ նվաճում է: Այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում է նույնիսկ Ռուսաստանի ցուցանիշը:

Հաջորդը գազը ավտոմեքենաների համար որպես շարժիչային վառելիք օգտագործելն է, որտեղ նույնպես «Հայռուսգազարդին» հաջողվել է ստեղծել «իդեալական, հավասարակշռված» վիճակ: Վալերի Գոլուբեւն ընդգծեց, որ այն ավելի խնայողական եւ մաքուր վառելիք է, քան դիզվառելիքը:

Եվ երրորդը գազի սպառման կառուցվածքի փոփոխությունն է: Եթե նախկինում դրա հիմնական սպառողը էներգետիկան էր, ապա այժմ աճել են բնակչության եւ փոքր ու միջին ձեռնարկությունների գազի սպառման ծավալները:

Իսկ ընդհանուր առմամբ վերլուծելով 2006-ի ցուցանիշները, ընկերության տնօրենների խորհուրդը գոհունակությամբ արձանագրել է, որ բոլոր տնտեսական ցուցանիշերն ավելի են լավացել: Վալերի Գոլուբեւն ընդգծեց, որ ընկերության բաժնետերերի միաձայն գնահատականով, «Հայռուսգազարդը» այս ոլորտի օրինակելի ընկերություն է:

Հայաստանին մատակարարվող գազի գների վերաբերյալ տրված հարցին Վալերի Գոլուբեւը պատասխանեց, որ Հայաստանի համար 110 դոլար գինը ամենացածրն է: Դրանից էժան միայն Բելառուսին մատակարարվող գազի գինն է, որը սակայն եկող տարի կդառնա 130 դոլար: Վալերի Գոլուբեւը երեկ պատասխանելով լրագրողների հարցին, հայտնեց նաեւ, որ «Հայռուսգազարդն» առդեն ձեռք է բերել Իրան-Հայաստան գազամուղը:

Կարեն Կարապետյանն իր հերթին նշեց, որ «Հայռուսգազարդը» հնարավորություն է ստեղծել, որ Հայաստանը դառնա էներգիայի վաճառքի «լավ հրապարակ»: Ռուսաստանից եւ Իրանից Հայաստան են մտնում երկու գազամուղ, Հրազդանի 5-դ էներգաբլոկն է վերականգնվելու, իսկ ապագայում նավթավերամշակման գործարանի ստեղծման դեպքում, էներգետիկ եւ գազի պակաս ունեցող տարածաշրջանում դրանց վաճառելու լավ հնարավորություններ են ստեղծվում:

Ճեպազրույցի վերջում «Հայռուսգազարդի» գլխավոր տնօրենը հատուկ ընդգծեց այն հանգամանքը, որ գազի սպառման շնորհիվ Հայաստանի բնակչությունը խնայում է տարեկան մոտ 300 մլն դոլար, իսկ տրանսպորտային միջոցները՝ 180 մլն դոլար:

«Հայռուսգազարդի» 10-ամյակին նվիրված տոնական միջոցառումներն ավարտվեցին ուր երեկոյան՝ հայ եւ ռուս հանրահայտ երգիչների եւ երաժիշտների հանդիպեսության հրապարակում տրված համերգով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երեւանի կոնյակի գործարանն սկսում է խաղողի մթերումը

Ամում են հայկական կոնյակի վաճառքի ծավալները

Սեպտեմբերի 15-ից Երեւանի կոնյակի գործարանը հայտարարում է 2007-ի այգեկութի սկիզբը: Այդ օրը խաղողի մթերումներ կիրականացվեն Երեւանի կոնյակի գործարանի Այգավանի եւ Բուրաստանի մթերման կետերում: Սեպտեմբերի 16-ին գյուղացիներից խաղող կընդունվի Արմավիրի, իսկ մի քանի օր անց Տավուշի մասնաճյուղերում:

Երեկ հրավիրած մամուլի ասուլիսում գործարանը ներկայացնող գործադիր տնօրեն **Սեդրիկ Ռեսայոն** եւ արտադրության տնօրեն Ֆիլիպ Թիբոն տեղեկացրին, որ այս տարի գործարանը մտադիր է ավելացնել մթերվող խաղողի քանակը մինչեւ 28.700 տոննա, նախորդ տարվա 28.000-ի դիմաց: Ընդ որում, ընկերությունը նախորդ տարվա համեմատությամբ բարձրացրել է նաեւ 1 կգ խաղողի դիմաց վճարվող գումարը՝ 130 դրամի փոխարեն 133:

Ներկայացուցիչներն ընդգծեցին, որ մթերման ծավալների ավելացումը եւ գնի բարձրացումը հիմնված են նաեւ վաճառքի ցուցանիշների մեծացման վրա: Մասնավորապես հուլիսին եւ օգոստոսին «Արարատ» կոնյակի վաճառքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եղել է 11 տոկոս ավելի, նշված երկու ամսում կազմելով մոտ 420 հազար լիտր: Իսկ «Պեռնոն Ռիկար» ընկերության ներմուծած ապրանքների վաճառքը կրկնապատկվել է:

Հետաքրքրական է, որ Երեւանի կոնյակի գործարանը «Վեդի ալկոյի» հետ սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին կրկին շուկա կհանի Old Yerevan գինին, որ պատրաստվում է 100 տոկոս հայկական արենի տեսակի խաղողից: Գործարանի ներկայացուցիչների հավաստմամբ, մոտ ժամանակներս կլինեն նորություններ, որոնց մասին կտեղեկացվի:

Ինչ վերաբերում է «Վեդի ալկո» ընկերության հետ համագործակցությանը, ապա Սեդրիկ Ռեսայոն պարզաբանեց, որ այստեղ մրցակցության առանձնակի հարց չկա, քանի որ «Վեդի ալկոն» մասնագիտացած է գինիների արտադրությամբ, իսկ Երեւանի կոնյակի գործարանը՝ կոնյակների: Եվ, որպեսզի գործարանը որակյալ գինիներ արտադրի, նախընտրել է համագործակցել մասնագետ գործընկերոջ հետ:

Լրագրողների հարցերին պատասխանելով, Ռեսայոն պարզաբանեց, որ պայմանագրեր չունեցող գյուղացիների բերքի մթերում չի լինում, իսկ խաղողի նոր տեսակների հայաստան բերելու հարցը սահմանափակված է օրենսդրորեն, որի համաձայն Հայաստանում թույլատրվում է օգտագործել 13 տեսակի խաղող կոնյակի արտադրության համար: Եվ եթե այդ օրենսդրական դրույթները փոխվեն, ապա ընկերությունը կաշխատի նոր տեսակների ուղղությամբ:

Կոնյակի հիմնական սպառումը սփյուռքահայերի շրջանում իրականացնելու ուղղությամբ Սեդրիկ Ռեսայոն համաձայնեց, որ իսկապես հիմնական սպառումն իրականացվում է սփյուռքյան համայնքներում, բայց արդեն իսկ հեռախորհրդային տարածությունում հատկապես միջոցառումներ են իրականացվում հայկական կոնյակի գովազդման ուղղությամբ: Բացի այդ, նմանօրինակ աշխատանքներ տարվում են նաեւ Մ. Նահանգներում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում:

Այն տեղեկությունները, թե «Պեռնոն Ռիկարը» պատրաստվում է վաճառել Երեւանի կոնյակի գործարանը, Ռեսայոյի հավաստմամբ, չեն համապատասխանում իրականությանը: Եվ քանի որ ընկերությունը մեծ ներդրումներ է անում հատկապես մասնաճյուղերում, զարգացնում է իր բիզնեսը, մյուս կողմից էլ աճում են հայկական կոնյակի վաճառքի ծավալները, ապա անտրամաբանական է կոնյակի գործարանը վաճառելու ցանկություն ունենալը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գերմանական խոշորագույն վարկային ծրագիր Հայաստանի համար

Մեր երկրին հատկացվեց 79,5 մլն եվրո

2007-2008 թվականներին երկկողմ տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության շրջանակներում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հայաստանին կտրամադրի 79,5 մլն եվրո: Այդ մասին երեկ ոլորտանագիր ստորագրեցին Հայաստանի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանն ու Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար Ռոլֆ Բալդուսը:

Ինչպես ստորագրման արարողությանը հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը, վերոնշյալ 79,5 մլն եվրոյից 74 մլն եվրոն տրվում է ֆինանսական, իսկ 5,5 մլն եվրոն՝ տեխնիկական համագործակցության ծրագրերի համար: 74 մլն եվրոյից 4 մլն եվրոն դրամաշնորհ է, 6 մլն եվրոն արտոնյալ վարկ, որն ուղղված է Հայաստանում բնակարանային շուկայի զարգացմանը: 29 մլն եվրոն նախատեսված է Ռոտանի ՀԷԿ-ի վերականգնման ու վերանորոգման համար: Այդ գումարի կեսը՝ 14,5 մլն եվրոն արտոնյալ վարկ է, մյուս կեսը՝ առեւտրային: Առեւտրային վարկը տրվել է 5,95 տոկոսով, 15 տարի ժամկետով եւ 4 տարի արտոնյալ ժամկետով: Այս երկու մասով «խառը» վարկի միջին տոկոսը, ըստ նախարարի, կկազմի 2 տոկոս:

Մնացած գումարից 14 մլն 600 հազար եվրոյով կվերականգնվի Գյումրու բարձրավոլտ երկրորդ ենթակայանը, իսկ 20 մլն 400 հազար եվրոյով կկառուցվի Հայաստան-Վրաստան բարձրավոլտ էլեկտրաէներգիա սնանալ Հայաստանից եւ որքանով է նպատակահարմար այդ գիծը կառուցել, Վարդան Խաչատրյանն ասաց, որ այն միայն էլեկտրաէներգիա առուվաճառքի համար չի կառուցվում, այլ ընդհանրապես էներգետիկ խնդիրների լուծման համար:

Ասվածին Ռոլֆ Բալդուսն ավելացրեց, որ Վրաստանը եւս ցանկացել է կառուցել այդ էլեկտրահաղորդման գծի իր մասը, այնպես, ինչպես Հայաստանը՝ իր մասը: Նա հայտնեց նաեւ, որ այդ գիծը կառուցվում է «Հարավային Կովկաս. նախաձեռնություն» ծրագրով: Հայաստանում իրականացվող ծրագրերի մի մասը, ըստ Ռոլֆ Բալդուսի, կառուցվում է երեք հարավկովկասյան երկրների հետ համագործակցության, մյուսը՝ երկկողմ ծրագրերով:

Ա. Մ.

Ռուսաստանը նոր փոփոխությունների շեմին

1-ին էջից

Հասկանալի է, որ ռուսական ընդդիմությունը հնարավորություն չունի մեծամասնություն կազմելու նոր ձեւավորվող խորհրդարանում, սակայն Պուտինին տվյալ պարագայում մտահոգում են ոչ այնքան Պետական Դումայի ընտրությունները, որքան 2008-ին սպասվելիք նախագահական ընտրությունները, եւ բացառված չէ, որ այս քայլերով Ռուսաստանի ղեկավարը պատրաստում է իր իրավահաջորդին: Ֆրադկովի հրաժարականի մասին լուրի տարածումից անմիջապես հետո արեւմտյան մի շարք լրատվամիջոցներ հայտարարեցին, որ հնարավոր հաջորդ վարչապետը կլինի ներկա փոխվարչապետ Սերգեյ Իվանովը եւ այսպիսով Պուտինը նրա համար ճանապարհ է հարթում իշխանության գալու համար: Սակայն Ռուսաստանի ներկա նախագահը Արեւմուտքի համար միշտ եղել է անկանխատեսելի իր քայլերով:

2004-ին էլ, իր ընտրություններից 4 օր առաջ Միխայիլ Ֆրադկովի նշանակմամբ Պուտինը հերքեց մի շարք կանխատեսումներ հնարավոր նոր վարչապետի թեկնածության մասին: Ֆրադկովի նշանակումը գնահատեցին որպես տեխնոկրատ կառավարության ստեղծման փորձ, երբ երկրի կառավարությունը ղեկավարում է պրոֆեսիոնալ, որը չունի քաղաքական հավակնություններ եւ իր պաշտոնում չի կարող քաղաքական մրցակից լինել երկրի նախագահի համար: Այն ժամանակ նշվում էր, որ դա գրագետ քայլ էր, քանի որ Վլադիմիր Պուտինը սկսել էր պայքար հրեական ծագում ունեցող ռուս օլիգարխների դեմ, ինչը Արեւմուտքում գնահատվում էր որպես ազգայնամոլական քաղաքականության դրսեւորում: Հրեական ծագում ունեցող Միխայիլ Ֆրադկովի նշանակմամբ Պուտինը փաստորեն վերջ դրեց նման խոսակցություններին, ցույց տվեց իր լոյալությունը ազգային փոքրամասնությունների՝ տվյալ դեպքում հրեաների նկատմամբ եւ վերջապես ձերբազատվեց վարչապետի պաշտոնում իրեն հնարավոր մրցակից ստեղծելու վտանգից:

Նոր վարչապետի, տվյալ դեպքում Վիկտոր Զուբկովի նշանակմամբ նոր հարցեր են առաջնում: Արդյոք վերջինս կարո՞ղ է դառնալ, կամ Պուտինը տեսնո՞ւմ է նրան որպես իր իրավահաջորդի, թե՞ սա միջանկյալ մի քայլ է, որից հետո պարզ կլինի, թե ով է լինելու Ռուսաստանի հաջորդ նախագահը եւ մենք ականատես կլինենք նոր հրաժարականի եւ նոր վարչապետի նշանակման: Ըստ արեւմտյան լրատվամիջոցների, բացառված չէ, որ Պուտինը այսպիսով իր համար երրորդ անգամ նախագահ ընտրվելու հնարավորություն է ստեղծում, թեեւ Ռուսաստանի նախագահը բազմիցս հայտարարել է, որ չի պատրաստվում երրորդ անգամ իր թեկնածությունը առաջադրել, ինչը սահմանադրությամբ արգելված է:

Ինչպես, այս փոփոխությունների հետեւանքով քաղաքական ճգնաժամը Ռուսաստանում միշտ հավանական է: Կարող ենք ավելացնել միայն, որ մեկ օրվա ընթացքում վարչապետի հրաժարականը եւ նորի նշանակումը նախապատրաստվել էին վաղուց եւ Պուտինը հստակ պատկերացնում է, թե ինչ է անում: Կարող ենք միայն հավելել, որ Ռուսաստանի նախագահի քաղաքական քայլերը շարունակում են մնալ անկանխատեսելի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 80 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻ ԱՐԵՏԻՔԵՍՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅՈՒՍՈՒՖԵՍՆ / հեռ 529221
Լուրերի սենյակ / հեռ 581841
Հանձնարարական ծառայություն / հեռ 582483
Տարբերակ լրահոսում ծառայություն / հեռ 529353
Հանձնարարական տարածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Աղվան Հովսեփյանը՝ ԱԺ դասգամավորների հարցերի խաչմերուկում

Ազգային ժողովի միջանցքներում զրուցելով մեծամասնական դասգամավորներից շատերի հետ եկանք այն եզրակացության, որ Աղվան Հովսեփյանն առանց բարդությունների Ազգային ժողովից նորից դուրս կգա գլխավոր դասախազ դարձած, բայց չի կարողանա շրջանցել այն բազմաթիվ տհաճ հարցերը, որոնցից հաճախ խուսափում է՝ հաջողացնելով միայն երկու-երեք լրատվամիջոցի ընտրվի հանդիպել: Եվ երեկ նա, գլխավոր դասախազության աշխատանքը 20 րոպեի չափ ներկայացնելուց հետո, այդպիսի հարցերի դասախանեց, այսօր եւս նրան հարցախեղդ կանեն՝ գռանցվել էին երկու տասնյակից ավելի դասգամավորներ: Որոնց երկրի նախագահից առաջադրված թեկնածու, ում բարեփոխված սահմանադրությամբ պետք է նշանակի Ազգային ժողովը, երեկ Ա. Հովսեփյանն իր ելույթն սկսեց Հայաստանի դասախազության հիմնադրումից՝ 18 թվականից՝ եւ մեր օրերի դասախազությունը նկարագրեց որպես միջազգային չափորոշիչներին եւ Եվրոմիության երկրների դասախազական համակարգերի կարգավիճակին համարեցված կառույց: Փոփոխությունների եւ փոփոխությունների ենթարկված դասախազական համակարգն այնպես է աշխատել վերջին տարիներին, որ նպաստել է օրինականության հաստատմանը, հանցավորության մակարդակի նվազեցմանը, պետական շահերի պաշտպանությանը եւ այլն: Ճիշտ է, սակայն, անհանգստացնող թերություններ ու բացթողումներ եւս նշվեցին՝ առանձին անձանց ու խմբավորումների մեջ անպատժելիության հոգեբանության ձեւավորումը, հանցավորության դեմ պայքարի անկատարությունը. թերությունները հետեւանք են առանձին աշխատողների ցածր պրոֆեսիոնալիզմի, իրենց բարձր դիրքի կոչման ոչ լիարժեք գիտակցման: Դասախազությունը սկզբունքորեն ազատվել ու ազատվելու է նման աշխատողներից՝ վերջին մի քանի տարին դասախազության 15 աշխատակից հեռացվել է աշխատանքից, 26-ը ենթարկվել կարգապահական տույժերի:

Վերջին տարիներին հանցագործության մակարդակը երկրում կայուն է եւ տատանվում է տարեկան 10-12 հազարի սահմաններում, ընթացիկ 8 ամիսներին այդ տվյալները մտահոգիչ չեն, նախորդ տարվա համեմատ հանցագործությունները նվազել են 13 տոկոսով: 110-ով նվազել են ծանր, 300 դեպքով՝ քրեական հանցագործությունները, 3-ով նվազել է սպանությունների թիվը եւ 21-ով՝ կողոպուտների ու ավազակային հարձակումների: Թեեւ շարային խաղաղացում այդ թվերով հազիվ թե համոզես, որ մեր երկրում հանցավորությունը պակասել է:

Հովսեփյանը շարունակում է. ԱՊՀ եւ եվրոպական մի շարք երկրների հետ համեմատած՝ հանցավորության ցուցանիշները բարվոք են: Տարեկան քննվում է 7-8 հազար քրեական գործ:

Զեկուցումը մարսելը թողնելով պատգամավորներին, անցնենք Ա. Հովսեփյանի տված պատասխաններին՝ այս օրերին հասարակությանն անհանգստացնող հարցերի:

Այսպես՝ Լոռու մարզի դատախազի սպանության գործի քննության խորթ մեթոդներին անդրադառնալով՝ Ա. Հովսեփյանը նախ շոու անվանեց Վանաձորում տեղի ունեցողը՝ կարված վկաներից ծեծուջարդով խլված ցուցմունքների բարձրաձայնման հետ, ասելով, թե կան մարդիկ, ում ձեռնտու չէ այդ հանցագործության բացահայտումը, հենց նրանք են կարծիք ձեւավորում, թե քննչական խումբը պատահական մարդկանց բռնում-տանում է հարցաքննության. «Բազմաթիվ անգամ ստուգվում է նրանց առնչությունը, նոր հարցաքննվում են»: Ա. Հովսեփյանն այս գործն ամեն մեթոդով բացահայտելու հակված չէ, բայց հակված է բացահայտելու: «Անթույլատրելի մեթոդներով ձեռք բերված արդյունքները, մեկ է, դատարանում պայթելու են», ասաց նա: Եվ նշեց մի ակնառես աղջկա ի հայտ գալը, որը հավաստում էր, թե տեսել է՝ ովքեր եւ ինչպես սպանեցին Ալբերտ Ղազարյանին, մինչդեռ դա ընդամենը քննությունը շեղելու փորձ է եղել: Եվ հաստատեց, թե ինքը հետեւում է, որ խորթ մեթոդներով ցուցմունքներ չկորզվեն: Բայց վկաների իրականությունն այլ է, դատախազական իրականությունն՝ այլ, եւ հենց Ազգային ժողովի դռների մոտ վանաձորցի շաբ հարգարժան մի մարդ (անունը չենք նշում) մինչեւ անթույլատրելի մեթոդներով ցուցմունք կորզելու պատմությունը:

Իսկ ինչպես եղավ, որ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի խափանման միջոցը մի քանի օր առաջ երկարաձգվեց, ապա անսպասելիորեն փոխվեց: Ա. Հովսեփյանի պատասխանն ի տեղի եւ ժամանակի էր. ԱԱԾ-ի հարուցած գործի համար հիմք է ծառայել դրածո մարդկանց միջոցով Ռուսաստանի Դաշնությունից գումարներ ուղարկելու եւ ստանալու փաստը, իրականացվել են օրինական գաղտնալսումներ, հարցաքննվել են Հայաստանում գումար ստացած 9 դրածոները, որոնցից ոչ մեկն այդ գումարների հետ կապ չի ունեցել, դրանք ի վերջո հասցրել են հասցեատիրոջը: Ռուսաստան են մեկնել հայկական 2 քննչական խմբեր, եւ քանի դեռ երկրորդ քննչական խումբը չէր վերադարձել, խափանման միջոցը չէր կարելի փոխել, դրա համար էլ երկարաձգել են: Իսկ խմբի վերադառնալուն պես, երբ պարզվել է, որ բոլոր քննչական գործողությունները կատարված են, եւ արդեն ՌԴ-ում պետք է ռուսական կողմը գործողություններ կատարի, ստեղծարող սուբյեկտներ ստուգվեն, դրա համար շատ ժամանակ է պահանջվում՝ այդ պահին էլ գլխավոր դասախազը խափանման միջոցը փոխել է: Գործը չի կարճվել՝ պարզելու համար, որ ուղարկված գումարները ոչ իրավական ճանապարհով են ձեռք բերվել. «Ոչ մեկը ծառայություն կատարելու համար 20 հազար դոլար չի ուղարկում», նկատեց դատախազը: Այս հարցն, այնուամենայնիվ, պատգամավորները վերակրկնեցին, երեւում է՝ գլխավոր դատախազի թեկնածուն չէր համոզել պատգամավորների մի մասին:

Խոսք եղավ, որ դատախազությունում ստեղծվելու է քննչական մարմին՝ բարձրաստիճան անձանց կոռումպացվածության դեմ պայքարելու համար: «Ժառանգությունից» Անահիտ Բախչյանի հեռաբրիռությունը՝ արդյոք ընտրվելուց հետո Գագիկ Ցիսանգիրյանի հետ շարունակելո՞ւ է աշխատել (նա հղում արեց զինվոր-սպա հանցագործություններում միշտ մեղավոր դարձող եւ պատժվող զինվորներին), բավարարվեց այսպես. «Ոչ թե ես եմ նրա հետ աշխատում, այլ՝ ինքն ինձ հետ», եւ ավելացրեց. «Ես կողմնակից եմ, որ անմեղ մարդիկ չդատապարտվեն»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՅՍՕՐ

Ժամը 10:00-ին «Կոնգրես» հյուրանոցում կանցկացվի «Տպագրական ժամուղի տարածում. մարտահրավերներ եւ հեռանկարներ» թեմայով միջազգային սեմինար:

Ժամը 12:00-ին «Փաստարկ» ակումբում տեղի կունենա Ազատական առաջադիմական կուսակցության նախագահ Հովհաննես Հովհաննիսյանի ժամուղի ասուլիսը:

Ժամը 13.00-ին Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի կունենա Հայոց լեզվի եւ գրականության համահայկական օլիմպիադայի եւ հայագիտական մրցույթի բացման պաշտոնական արարողությունը:

Իսկ «Հայացք» ակումբը կհյուրընկալի Ռիտա Շառոյանին, Լետն Անանյանին եւ Ռուբեն Գետրգյանցին, նույնպես ժամը 13.00-ին:

Նույն ժամին «Տեսակետ» ակումբի հյուրն է լինելու Սլովակիայի հայ համայնքի ղեկավար Աշոտ Գրիգորյանը

Ժամը 17.00-ին Բրիթիշ Քաունսիլի 5-ամյակի կապակցությամբ արտաքին գործերի նախարարությունում պաշտոնական ընդունելություն կանցկացվի արտաքին գործերի փոխնախարարի, Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ եւ լիազոր դեսպանի եւ հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների մասնակցությամբ:

Ճշտում

«Ազգի» սեպտեմբերի 11-ի համարում «Զարգացման հայկական գործակալությունն ունեցավ նոր գործադիր տնօրեն» վերնագրով հաղորդագրությունը մի շարք գնահատականներ էր բովանդակում «Զարգացման հայկական գործակալության» նախկին գործադիր տնօրեն, Չինաստանում Հայաստանի դեսպան նշանակված Վահագն Մովսիսյանի, ինչպես նաեւ նախորդ գործադիր տնօրենների աշխատանքային գործունեության մասին: Խմբագրությունը հարկ է համարում ճշտել, որ այդ գնահատականը չի համընկնում խմբագրության տեսակետին եւ ներկայացնում է բացառապես մեր աշխատակցի անձնական կարծիքը:

Խորհրդարան-կառավարություն հարց ու ...

1-ին էջից

Երկքաղաքացիություն կտրվի դեկտեմբերից

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ հաստատվել է երկքաղաքացիության համար դիմելու կարգը կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերի ընդունման ժամանակացույցը, որը տեւելու է մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի առաջին տասնօրյակ: Ի պատասխան ՀՅԴ խմբակցության ղեկավար Հրայր Կարապետյանի հարցի, վստահեցրեց արդարադատության նախարար Գետրգ Դանիելյանը: Նրա տեղեկացմամբ՝ ժամանակացույցում ներառված է 13 ենթաօրենսդրական ակտ, աշխատանքն էլ ընթանում է ժամանակացույցի համաձայն: Արդեն մշակված եւ կառավարության հաստատմանն է ներկայացված հայերենի եւ սահմանադրության իմացության քննության կարգը: Երկքաղաքացիության համար դիմող անձանց կարգավիճակի առնչությամբ լրացում է կատարվել «Քաղաքացիության մասին» օրենքում, որով նախատեսվում է երկքաղաքացիներին տալ այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք ունի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, բացառություններն էլ սահմանվելու են միջազգային պայմանագրերով եւ կոնկրետ օրենքներով:

Վերելակների ճակատագիրն անհույս չէ

Համաձայն հաշվարկների, Հայաստանի տարածքում բնակելի շենքեր սպասարկող 4 հազար 261 վերելակ կա, որոնցից 354-ը չի աշխատում, 38-ը լիովին փոխելու, 2 հազար 464-ն էլ հիմնանորոգելու անհրաժեշտություն կա: Վերջինի համար պահանջվող գումարն էլ 3 միլիարդ դրամ է կազմում: Հայթայթման մտահոգությունն էլ առկա է ՀՀ կառավարության գործնական ծրագրերում: Տեղեկացրեց տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանն ի պատասխան պատգամավոր Արման Սահակյանի հարցի:

ՀՀ պատմամշակութային հուշարձանները բանակցության առարկա չեն

Այս տարի Հայաստանի բնակիչները Խորավանք այցելելու պարագայում խախտած կլինեին Վրաստան-Հայաստան սահմանն ու կճանաչվեին օրինախախտներ՝ պատժի կրմամբ: Սա վրացական կողմի կարծիքն է, որ բարձրաձայնեց պատգամավոր Արմեն Աշոտյանը: Այդ հեռանկարից խուսափելու համար մարդկանց արգելվել է ոտք դնել Ջիլիզակ գյուղից 10 կմ հյուսիս գտնվող Խորավանք: Մինչդեռ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը վստահեցրեց. «Հայաստանի Հանրապետության պատմամշակութային որեւէ հուշարձան բանակցությունների առարկա չէ եւ չի կարող լինել»:

Պահպանենք ուսուցիչներին

Հայաստանի հատկապես լեռնային բնակավայրերում մեծ թվով դասարաններ են փակվել աշակերտներ չլինելու պատճառով: Միայն Սյունիքի մարզում փակվել է 150 դասարան, իսկ կրտսեր դպրոցի աշակերտները նախորդ տարվա համեմատությամբ միայն 1500-ով: Պատգամավոր Հեղինե Բիշարյանի այս կապակցությամբ առաջադրած հարցին կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը պատասխանեց, որ ուսուցիչներին չկրճատելու եւ մասնագետներ չկորցնելու նպատակով հանրապետության մանկավարժական բուհերում ստեղծվել են վերադրակավորման ֆակուլտետներ, որպեսզի ընդլայնելով ուսուցիչների մասնագիտացումը հնարավորություն տան վերջիններիս աշխատելու:

Երեւանի օրենքից հետո կանդրադառնան մետրոպոլիտենին

Երեւանի մետրոպոլիտենի շինարարության վերսկսումը մայրաքաղաքը հետզհետե կազատի տրանսպորտային ծանրաբեռնվածությունից եւ զուգահեռաբար կկրճատի էկոլոգիական ակնառու խնդիրները: Հավատացած է պատգամավոր Վլադիմիր Բաղալյանը: Կառավարությունն ի դեմս տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի, հավատացած է, որ մետրոպոլիտենի շինարարության վերսկսման եւ ընդհանրապես մայրաքաղաքի համար նրա դերի կարեւորության մասին նպատակահարմար կլինի խոսել Երեւանի նոր օրենքի ընդունումից հետո:

Եկող տարի 21 հազարից ավելի միջին կենսաթոշակ

1000-1500 դրամով կենսաթոշակի բարձրացմամբ շատերի ընտանեկան բյուջեն պակասեց 7000 դրամով: Մարդիկ զրկվեցին ընտանեկան նպաստ ստանալու հնարավորությունից: Այս իրականությունը հուզել էր պատգամավոր Վիկտոր Դալլաքյանին, եւ համաձայն ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի, այն կփոխվի 2008 թվականին. «Միջին կենսաթոշակը կհասնի 21 հազար 842 դրամի, որը, մեր կանխատեսումներով, կհամապատասխանի աղքատության գծին: Ավելանալու է նաեւ ընտանեկան նպաստը: Մենք 125 հազար նպաստառու աղքատ ընտանիք ունենք, բայց աղքատների թիվն ավելին է, իսկ 2008-ին աղքատների եւ նպաստառուների թիվը նույնն է լինելու»:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Ժառանգություն» եւ Սերժ Սարգսյան

Ընդդիմություն կազմված «Ժառանգություն» կուսակցության խորհրդարանական խմբակցության ներկայացուցիչներ Լարիսա Ալավերդյանի եւ Ստեփան Սաֆարյանի հարցերի պատասխանները երեկ Ազգային ժողովի նիստում տվեց ինքը՝ վարչապետ Սերժ Սարգսյանը, դրանց քաղաքական բովանդակությանն անդրադառնալու նկատառմամբ:

Ստեփան Սաֆարյանը հետաքրքրվեց թե արդյոք վարչապետը տեղյակ է իր արձակուրդի ընթացքում՝ օգոստոսին Թալինում կայացած գյուղապետների եւ տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի հանդիպումից, որը, պատգամավորի գնահատականով, վարչական լծակի կիրառում է, քանի որ հավաքը կայացել է թիվ 15 ընտրատարածքում օգոստոսի 26-ին նշանակված վերընտրությունից առաջ: Թիվ 15-ում առաջադրվել էր «Ժառանգության» առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը եւ պարտվել՝ հավաքելով ձայների մոտ 3 տոկոսը:

Վարչապետի պատասխանը հետեւյալն էր. «Ես այդպիսի հարց կտայի Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի նախագահին: Որովհետեւ այն հանդիպումը, որ եղել է Թալինում, կառավարության հետ որեւէ առնչություն չի ունեցել: Այդ հանդիպմանը, այդ խորհրդակցությանը մասնակցել են Հանրապետական կուսակցության անդամ գյուղապետները, եւ որեւէ մեկը չի կարող մեզ արգելել որպես կուսակցություն գործունեություն ծավալել: Վստահ եմ, եթե այնտեղ «Ժառանգությունը» մազ անգամ խախտում գտներ, ապա կդիմեր դատարան»: Այնուհետեւ Սերժ Սարգսյանը կոչ ներառեց իր պատասխանում. «Եվ վերջապես բավական է: Եկեք համակերպվենք ուժերի հարաբերակցության հետ, եկեք մեր ուժերին գլորա խնդիրների մեջ մտնենք, որպեսզի հետո չսկսենք, այսպես ասած, հետընտրական պրոցեսներ: Ընտրություն է, տեղի է ունեցել, որեւէ դատական նիստ չի եղել, բողոքներ չեն եղել, ձեր ներկայացուցիչը ԿԸՀ-ում ամեն ինչը ընկալել է, ընդունել է, ձեր կուսակցության նախագահն այս առիթով որեւէ տեղ չի դիմել: Ցեմ հասկանում, խնդիրն ինչ է: Մեկ անգամ եւս հնչեցնելով, պարտությունն ես կրել: է, եթե ուզում ես, տասն անգամ կարող ես ասել, ձեր խնդիրն է»:

Նկատի առնելով 2008-ի նախագահական ընտրությունը, Թալինի հանդիպումը նախընտրական գնահատելու հիմք համարեց Ստեփան Սաֆարյանը, ինչին Սերժ Սարգսյանն արձագանքեց հետեւյալ կերպ. «Եթե դրա համարում ես նախընտրական պրոցես, եւ եթե հույս ունես, որ խաչիկի դեմ ես պայքարելու, սխալվում ես: Բայց եթե ցանկանաս, խնդրեմ: Ուրեմն, երկրորդ, ինչ որ ձեզ պետք է, ասեմ: Որեւէ կուսակցություն չի կարող ամբողջովին անջրպետվել պետական խնդիրներից: Եթե այդպես լինի, որեւէ կուսակցության նախընտրական ծրագրում տնտեսական ցուցանիշներ չեն նշվի: Հասկանո՞ւմ ես: Նամանավանդ, եթե խոսքը վերաբերում է իշխող կուսակցությանը», իշխանական դիրքից հայտարարեց Սերժ Սարգսյանը:

Գեներալ Բաղմանյանը «վրաերթի է ենթարկում» Վահան գյուղը

Գեներալ Հայկազ Բաղմանյանը տարիներ շարունակ հայտնվել է տարբեր սկանդալային պատմությունների մեջ: Մամուլում եղել են բազմաթիվ հրապարակումներ, բայց դրանցից հետո ոչինչ տեղի չի ունեցել, գեներալի գործերն ավելի են լավացել, բիզնեսը՝ ծաղկել: Բանակի հրամանատարի ջիպը գրեթե ամեն օր կարելի է տեսնել Երևանի տարբեր սրճարանների, ռեստորանների մերձակայքում, փողոցներում, սեփական բենզալցակայանի մոտ: Այս ամենին զուգահեռ նա հասցնում է ղեկավարել ՀՀ զինված ուժերի բանակային կորպուսներից մեկը: Ստորև ներկայացնում ենք Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Վահան գյուղի 275 բնակիչների ստորագրությամբ «Հետքի» խմբագրությանը հասցեագրված նամակից մի հատված.

«1992-1994 թվականների ռազմական գործողությունների ժամանակ վահանցիները արհամարհել են վտանգն ու զրկանքները, հերոսաբար եւ սրբորեն պաշտպանել Հայրենիքի սահմանները: Այդ ծանր տարիներին ոչ մի վահանցի չի լքել իր հայրենի գյուղը, դպրոցն անգամ չի դադարեցրել իր ուսումնական պարապմունքները: Վահանի սահմանահատվածում թշնամին ոչ մի քայլ առաջխաղացում չի ունեցել: Վահանցիներն ամբողջ գյուղով են մասնակցել Հայրենիքի պաշտպանությանը: Տասնյոթ վահանցիներ զոհվել են այս հերոսամարտում, մի քանի տասնյակ մարդիկ՝ վիրավորվել, դարձել են հաշմանդամներ:

Մեր նախկին Կրասնոսելսկի տարածաշրջանում տեղակայված կայազորի հրամանատար, գեներալ Բաղմանյանի այցելությունը մեր տարածաշրջան պարտադիր ուղեկցվում է մի քանի ջիպերի շախմբով, տասնյակ թիկնապահներով՝ սարսափ տարածելով բնակչության շրջանում: Նրա կամակատարները հաճախակի են ընդհարվում տարածքի բնակչության հետ: Արհամարհում, նսեմացնում, ոտնահարում են ժողովրդի ինքնասիրությունը եւ արժանապատվությունը:

Օգոստոսի 30-ը վահանցիների համար սգո օր է: Ինչպես ամեն տարի, այնպես էլ այս տարի գյուղում նշվում էր 1992 թվականի օգոստոսի 30-ին զոհված չորս երիտասարդ վահանցիների հիշատակի օրը: Գեներալ Բաղմանյանի շախումբն այդ օրը երեկոյան, ժամը 20.30-ի սահմաններում, զորամասից վերադառնալու ժամանակ Վահան-Ճամբարակ ճանապարհի 4-րդ կիլոմետրի հատվածում միտումնավոր, հզոր մեքենաների լույսերով կուրացնում է դիմացից եկող ՎԱԶ 2106 մակնիշի ավտոմեքենայի վարորդին, որը, որպեսզի ձորը չգլորվի, ստիպված կանգնում է: Այդ ժամանակ ջիպերից մեկը հետնամասով հարվածում է կանգնած մեքենային՝ ձորը գլորելու նպատակով: Մեքենայից իջած վահանցի երիտասարդները հարցնում են, թե ինչու խփեցին մեքենային: Թիկնազորի տղաները սկսում են փողոցային, լկտի արտահայտություններով հայհոյել, ծեծի ենթարկել տղաներին: Այդ պահին դեպքի վայրին է մոտենում վահանցիների մեկ ուրիշ մեքենա: Միջադեպը նկատելով՝ նրանք փորձում են տեղեկանալ, թե ինչու են ծեծում տղաներին: Պատասխանը լինում է այն, որ թիկնապահները հրազենի տարբեր տեսակներով կրակահերթ են բացում տղաների վրա: Բարեբախտաբար, մութը եւ տեղանքը նպաստում են, որ տղաները կարողանան փախչել: Կրակոցներից տագնապահար եղած մոտակայքի բնակիչները խուճապի մեջ են ընկնում:

Կատաղած թիկնապահները սկսում են ջարդել վահանցիների մեքենաները: Ինքնաձիգների կրակահերթերից երջանիկ պատահականությամբ զոհեր չեն լինում, ինչը կարող էր եւ լինել: Տուժած երիտասարդների մեջ է եղել նաեւ մեր շրջանից առաջինը զոհված Գրիգոր Ճաղարյանի տղան՝ Գոռը: Գրիգորը զոհվեց 1990 թվականի հոկտեմբերի 18-ին՝ թուրքի գնդակից, իսկ տղան կարող էր զոհվել հայոց բանակի գեներալի գնդակից: Գեներալ Բաղմանյանի հրամանով երկու երիտասարդների տանում են մոտակա զորամաս եւ հրամանատարի աշխատասենյակում գազանաբար դաժան ծեծի են ենթարկում: Կատաղածի հետեւանքով երեք վահանցիներ տարբեր աստիճանի վնասվածքներով տեղափոխվում են Ճամբարակի հիվանդանոց»:

Այս բովանդակությամբ նամակ վահանցիները հանձնել են նաեւ ՀՀ վարչապետին՝ հույս ունենալով, որ Ս. Սարգսյանը կատարվածին կտա «արժանի գնահատական, եւ մեղավորները կստանան համարժեք պատիժ, որպեսզի հետագայում բացառվեն նման անհանդուրժելի դեպքերը: Մեր խնդրանքը բոլոր վահանցիների կողմից է»:

Վահանցիների այս նամակն արդեն կառավարությունում է, գեներալ Հայկազ Բաղմանյանն այժմ նույնպես երեւանում է: Բայց ի՞նչ պետք է փոխվի դրանից, համոզված եղեք՝ ոչինչ: Այդ գյուղն իր կարողությամբ Հայկազ Բաղմանյանի մեքենաների արժեքը չունի նույնիսկ: Այնպես որ, հետ վերցրեք Ձեր նամակը, վահանցի՛ներ, քանի դեռ այլ դժբախտություններ Ձեր գյուղի գլխին չի բերել գեներալ Բաղմանյանը:

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
www.hetq.am

Թրաֆիկինգը՝ սրկության նոր ձեւ

Սեռական շահագործման է ենթարկվել 120 տուժող

Թրաֆիկինգն ամբողջ աշխարհում մեծ խնդիր է դարձել: Յուրաքանչյուր տարի ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ, մեծ մասամբ կանայք եւ երեխաներ, թրաֆիկինգի զոհ են դառնում սեռական կամ այլ բնույթի շահագործման ենթարկվելով, ինչպես որեւէ երկրի ներսում, այնպես էլ սահմաններից դուրս: Այս երեւույթն աննախադեպ մակարդակների է հասել, կարելի է համարել սրկության նոր ձեւ: Չնայած բազմաթիվ միջոցառումներ են ձեռնարկվում, օրենքներ ու կոնվենցիաներ են ստորագրվում, վավերացվում, երեւույթն օր օրի բարգավաճում է, խոշոր շահույթներ բերում ոմանց: Հայաստանն էլ հետ չմնաց այդ չարիքից ու տարանցիկ երկիր համարվողների շարքից դարձավ բուն՝ մասակարարող երկիր: Հայ կանայք ու աղջիկները հիմնականում «փող են շինում» Թուրքիայում, Արաբական Էմիրություններում, Հունաստանում: Տարօրինակ է, երբ մեր երկրում թրաֆիկինգն աճում էր, արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը հերքում էր այդ փաստը՝ երկու անգամ նշելով. «Որպես երեւույթ թրաֆիկինգ Հայաստանում չկա եւ այդ մասին խոսելը դեռ վաղ է» (տես **«Ազգի»** 2004 թ. փետրվարի 17-ի համարի «Թրաֆիկինգը Հայաստանում» հոդվածը), ու կասկում էր, որ 2-3 դեպք լինի, թե չլինի... Ահա նման ծածկադմփոցը լայն հնարավորություններ էր ստեղծում եւ մարմնավաճառների, եւ կավատների եւ, իհարկե, թրաֆիկինգի բիզնեսով զբաղվողների համար ու նրանց «ջրաղացին ջուր լցնում»:

Ասվածը հիմնավորելու համար ներկայացնեմ ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության թրաֆիկինգի դեմ պայքարի բաժնի այս տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ քր. օր.-ի 132, 132-1, 261, 262 հոդվածներով (բոլորը վերաբերում են թրաֆիկինգին) արձանագրած դեպքերի եւ քննված գործերի ամբողջական տվյալները: Վերը նշված չորս հոդվածներով կիսամյակում հանրապետության քննչական մարմինների վարույթներում քննվել է 25 քրեական գործ, որոնցից 15-ը՝ 24 անձի նկատմամբ ուղարկվել է դատարան: 24 մեղադրյալից 13-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանք, 11-ի նկատմամբ՝ չհեռանալու ստորագրություն: Դատի տրված 24 անձից 21-ը եղել են կանայք, որոնցից 13-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը, 8-ի նկատմամբ՝ չհեռանալու ստորագրություն, իսկ 3 տղամարդու նկատմամբ՝ մեկին՝ կալանք, մյուսին՝ գրավ, երրորդին՝ երկրից չհեռանալու ստորագրություն: Դատի տրված անձանցից 5-ը եղել են նախկինում դատված, բոլորն էլ համասեռ հանցագործությունների համար: Թրաֆիկինգի չորս հոդվածներով գործեր, գործի մասեր չեն կարճվել: Կասեցվել է 5 գործ 6 անձի նկատմամբ: 16 քր. գործով հետախուզման մեջ է գտնվում 21 անձ, իսկ միջազգային հետախուզում է հայտարարվել 7 անձի նկատմամբ: Կիսամյակում սեռական շահագործման է ենթարկվել 120 տուժող (սա փաստացի, իսկ թե քանիսն է թաքնվել, իրավապահներին ստույգ հայտնի չէ, քանի որ ոչ պաշտոնական տվյալներով, դրանց թիվն անցնում է մի քանի հարյուրը), որոնցից 63-ին շահագործել են Հայաստանում, 57-ին՝ արտերկրում, 30-ին՝ ԱՄՆ-ում, 27-ին՝ Թուրքիայում: Մարմնավաճառությամբ զբաղվելու համար վարչական պատասխանատվության է ենթարկվել 39 անձ: Համապատասխան ծառայությունների կողմից բժշկական ստուգման է ենթարկվել 125 անձ (մարմնավաճառ), որոնցից 18-25 տարեկան՝ 35, 25-35 տարեկան՝ 45, 35-45 տարեկան՝ 43, 45-ից բարձր՝ 2 անձ: Կիսամյակում չորս հոդվածներով քննված 12 քրեական գործով դատապարտվել է 17 անձ՝ 16 կին, 1 տղամարդ, ազատազրկման են դատապարտվել 15-ը, 1-5 տարի ժամկետով, 14 կին, 1 տղամարդ: Երկու կնոջ եւ երկու տղամարդու նկատմամբ էլ տուգանք է սահմանվել 300.000-400.000 դրամ:

Որքան էլ պատժաչափերը խստացվում են, երեւույթը չի նվազում, քանի դեռ կան այնպիսի վայ բիզնեսմեններ, որոնք հանուն անձնական շահի պատրաստ են հարազատ կնոջը, քրոջը, բարեկամին վաճառքի հանել, այն էլ Թուրքիայում, երբ դարասկզբին հայրենի օջախներից քշված հայ կանայք ու աղջիկները իրենց Եփրատ գետն էին գցում, որ չպղծվեն, իսկ հիմա մի քանի հարյուր դոլարի համար պատրաստ են ծախվել...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԿԱՐՅԱՆ



ԿՅԱՆՔ

Ընտրությունից ընտրություն հիշվող սահմանամերձ գյուղը

Կայան ավանից մինչեւ ադրբեջանական սահմանակից բնակավայր մի քանի տասնյակ մետր է՝ կիլոմետր էլ չի կազմում: Տավուշի մարզի այս բնակավայրի յուրաքանչյուր բնակիչ Կայանի գլխավոր փողոցով քայլող օտարականին զգուշացնում է, որ ճանապարհի վերջը Հայաստան-Ադրբեջան սահմանն է եւ շատ մոտ՝ լուսավորության հերթական սյունից սկսած: Սահմանագլխին նախկինում անցնող-դարձողին ողջունող հայտնու արձանը, որ տեղացիներն Արեւիկ են անվանում, այսօր միայն հեռվից է տեսանելի: Նույնկերպ հեռվից է նկատելի բույսերով ծածկված Հայաստան-Ադրբեջան ճանապարհը, որ եզրավորված է մոշի ու վարդի թփերով: Կայանցիներից մի քանիսը պատմեցին, որ այգիներում երկու կողմերին էլ լսելի են միմյանց ձայները, բայց անիրական՝ որեւէ խոսքի փոխանակումը: Սահմանի երկու կողմերում էլ ծգվող խաղողի այգիները բերքի են եւ ծանրաբեռնված շողշողացող բերքով: Չնայած դրան, Կայանում մշակման ենթակա հող չկա, ինչպես տարեցներից մեկն ասաց՝ մնացել է սահմանից այն կողմ: Փոխարենը կայանցիներից ոմանք մշակահողեր են ստացել հարեւան Այգեհովիտի տարածքում: Սակայն եղածը ավանի բնակչությանը զերծ չի պահում սոցիալական ծանր խնդիրներից: Ի դեպ, Կայանը ծերացող բնակավայր համարելն էլ սխալ կլիներ. «Երիտասարդներ շատ կան գյուղում՝ չեն ամուսնանում: Աշխատանքի, սոցիալական խնդիրները շատ են, լուծումն էլ արտերկրում են փնտրում, գնում ու մնում են», տեղեկացրեց Կայանի միջնակարգ դպրոցի տնօրեն **Լենա Վարդանյանը**: Տավուշի փարթամ բնության գրկում, խորհրդային եղբայրական հանրապետությունների սահմանագլխին քաղաքաշինք բնակավայր ունենալը կարետրելով, կառուցել են մի երկու տասնյակ խրուշչովկա եւ բնակիչներին աշխատանքով ապահովել տեղում գործող ծխախոտի գործարանում, որն այսօր ավերակ է ընդամենը:

Այսօր Կայան ավանի բնակիչները 370-ն են: Նրանցից գոնե մեզ հետ զրուցողները հպարտանում են իրենց օդ ու ջրով, բնության ու իրենց աշխատանքի պարգեւներով՝ պոտղներով, որոնք իրոք համեղ են եւ ոչ միայն. «Մեր մոշը ձեր ելորի չափ ա ու շատ համեղ, անտառն էլ լիքն ա պոտղներով: Էնա հավաքի ու ծախի՝ ափսոս, մեզ մոտ շատ էժան ա», պատմեց պատանի **Տիգրան Երիցյանն** ու անմիջապես հարցրեց. «Երեւան մոշն ի՞նչ արժե»: Թվերի տարբերությունը կրկնակիից էլ ավելի է՝ թե Երեւանում 500-600, ապա Կայանում մոշի ամենից բարձր գինը 250 դրամ է: Տիգրանը չզարմացավ, միայն ափսոսաց: Ընտանիքը մեծ է, աշխատողը միայն հայրը, պայմանագրային զինծառայող է: Հետո պատանին հետաքրքրվեց, թե Երեւանում ոնց են ապրում, գործ կա՞, ու ինքն էլ պատասխանեց. «Դե, Երեւան գործ կինի, բայց անտառներ ու բաղեր կան»: Երեւանում ապրելու մասին հարցին Տիգրանը շատ փոքր պատասխան տվեց՝ առանց պահ անգամ մտածելու. «Երեւան սկի եղած կամ, որ գիտենամ՝ կասրեմ, թե չէ: Մեր գյուղից էնա միջով Դիլիջան եմ քացած: Իմ դպրոցը յոլա տանեմ, բաղերը անտեր չթողեմ, անտառ քինամ մոշի, պյանի, բայց դե ինստիտուտ կարայի՝ չէի բողոքի»:

Կայան ավանում իրադարձությունները քիչ են, վերջինը եղել է խորհրդարանական ընտրությունների ժամանակ, հաջորդն էլ կայանցիները վստահ են, որ կլինի նախագահական ընտրության ժամանակ:

ՆԵՌԼԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

Իսլամը որպես դեմոկրատիայի միջոց

Թուրքիայում տեղի ունեցած «իսլամական հեղափոխությունը» չէր կարող վրիպել ռուսական մամուլի ուշադրությունից: Բանն այն է, որ Անկարան լուրջ ազդեցություն ունի Ռուսաստանի մուսուլմանաբնակ տարածաշրջաններում, որտեղ նա ակտիվորեն գործում է «լուսավորական», կրոնական, տնտեսական բնագավառներում, բնականաբար, այդ ֆոնի տակ իրականացնելով նաեւ քայքայիչ ու հետախուզական գործունեություն:

Անշուշտ Էրդողան-Գյուլ երկյակի հաջողությունն առաջին հերթին տնտեսական հիմք ունի: Չորս տարում կառավարությանը հաջողվեց կրկնապատկել երկրի համախառն ներքին արտադրանքը (մինչեւ 400 միլիարդ դոլար), եռակի կրճատել ինֆլյացիան (տարեկան մոտ 10 տոկոս), միայն վերջին տարում օտարերկրյա ուղղակի ներդրումները հասցնել 20 միլիարդի, ապահովել բազմահազար աշխատատեղեր, էկոնոմիկան դարձնել արտահանական՝ մրցունակ արտաքին շուկայում եւ այլն:

Սակայն Ռուսաստանում հաճուկ քննության առարկա է նաեւ բուն իսլամական գործոնի դերը, իսլամ-քաղաքականություն-էկոնոմիկա յուրօրինակ առնչությունների փոխներգործությունների հանգամանքը: Օբյեկտիվորեն, ինչպես էլ Էրդողանի «Արդարություն ու բարգավաճում» կուսակցությունը համարվի իսլամական, այդուհանդերձ, երբեք չես համեմատի մուսուլմանական աշխարհում գործող իսլամիստական ուժերի հետ: Ռուսական թերթերից մեկը նույնիսկ համարել է Գերմանիայի քրիստոնեա-դեմոկրատների իսլամական նմանակը:

Էրդողանը փաստորեն ստեղծել է նոր տիպի կուսակցություն, որի ծրագրում, օրինակ, մարդու իրավունքներն ու դեմոկրատիան հռչակվում են որպես... իսլամի կարեւորագույն տարրեր, կրոնական արժեքներ: Կառավարության մեջ, իշխանության բոլոր օղակներում ընդգրկվում են բարձրակարգ մասնագետներ՝ սակայն իսլամական բարոյական սկզբունքներին համախոհ (Գյուլն, օրինակ, մի քանի տարի աշխատել է զանազան միջազգային ֆինանսական հաստատություններում, նաեւ որպես Զարգացման իսլամական բանկի փոխնախագահ):

Իսլամը դարձնելով երկրի բարգավաճման ուղեցույց գաղափարախոսություն, կառավարությունը բավականին հաջողությամբ կրոնական բարոյականության շաս սկզբունքներ կիրառում է տնտեսական հարաբերություններում, բիզնեսում: Լավ վճարվող աշխատանքը համարվում է «կրոնական պարտք»: Արտադրություն բացելը համարվում է նույնքան աստվածահաճո գործ, ինչքան աղոթքը: Կապիտալի անարդյունավետ օգտագործումը (ասենք, բանկում սառեցնելը) ընկալվում է որպես «մեղք» եւ այլն:

Թուրքիայի ներկայիս ղեկավարությունը մեծ աշխատանք է տանում առավելագույնս թեթեւացնելու բյուրոկրատական արգելքները բիզնեսի համար, ձգտում է էկոնոմիկայում ստեղծել բարենպաստ պայմաններ եւ, որ շաս կարեւոր է, անվտանգություն գործարար մարդկանց համար: Այսինքն, «իսլամական» բիզնեսի համար բարոյական բարձր հասկացություններ եւ բարձրակարգ տեխնոլոգիաները միաստեղակ պարտադիր են: Եվ ստեղծված հարկային ու գործարար շահեկան մթնոլորտի առկայության դեպքում թուրքական բիզնեսը բարոյական պատասխանատվություն է վերցնում սոցիալական ոլորտում: Երկրի խոշորագույն գործարար հանրությունները ակտիվորեն զբաղվում են բարեգործությամբ, ֆինանսավորում են առավել տաղանդավոր երիտասարդների ուսումը արեւմտյան հեղինակավոր հաստատություններում, ստեղծում են ենթակառույցներ եւ այլն: Ավելին, իսլամական «համերաշխությանը» չմասնակցելը դառնում է անընդունելի. նման մարդու հետ ոչ ոք չի ուզենա գործ ունենալ:

Ի դեպ, բարոյական պատասխանատվությունը հետացնում է նաեւ պետության գործը. անհրաժեշտություն չի զգացվում պահպանելու ուռճացված վերահսկիչ մարմիններ:

Էրդողանն իսլամը նույնքան հաջողությամբ է օգտագործում նաեւ ներքաղաքական հարաբերություններում: Քրդերն, օրինակ, դրականորեն են արձագանքել ազգամիջյան խնդիրները ոչ թե ազգայնական, այլ կրոնական հիման վրա լուծելու փորձերին:

Էրդողանի առաջարկած իսլամական տնտեսական մոդելը բարեհաճությամբ են ընդունում նաեւ նույնահավաս շաս պետություններ, որոնք նախկինում խեթ էին նայում Թուրքիայի «գերաշխարհիկ» պետական կառուցվածքին: Ուրիշ հարց է, որ ինչպես բուն Թուրքիայում, այնպես էլ դրսում բոլորին չէ, որ ձեռնտու է այդ երկրի խաղաղ ու բուռն զարգացումը, եւ անակնկալների կարելի է սպասել: Սակայն այս վերջին ընտրությունները պարզորոշ ցույց տվեցին, որ Թուրքիայի բնակչության մեծ մասը գերադասում է ապրել իսլամական արդյունավետ տնտեսական մոդելի պայմաններում, քան նվազ արդյունավետ աշխարհիկ իշխանության շրջանակներում:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ռուսաստանը վակուումային ռումբ է փորձարկել

Ռուսական բանակը փորձարկել է նոր վակուումային ռումբ, որի հզորությունը, ըստ զինվորականների պնդման, կարող է համեմատվել միայն միջուկային մարտալիցքերի հետ:

Ռուսական բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ Ալեքսանդր Ռուկշինը հայտարարել է, որ նոր զինամթերքի ստեղծումը չի խախտում Մոսկվայի ստորագրած միջազգային պայմանագրերը, եւ որ դրա կիրառությունը չի աղտոտում շրջակա միջավայրը: Ռուսաստանի հանրային հեռուստատեսությամբ եւ «Ռոսիա» հեռուստաալիքով հեռարձակված հարցազրույցում Ռուկշինն ասել է, որ նոր զենքն իր արդյունավետությամբ եւ հնարավորություններով համեմատելի է միջուկային զինամթերքի հետ:

BBC-ն նշում է, որ ռուսներն իրենց նոր զենքն անվանակոչել են «Բոլոր ռումբերի հայր» անունով, ի տարբերություն ամերիկացիների համանման ռումբի, որը կոչվում է «Բոլոր ռումբերի մայր»:

Ռուսաստանցի մասնագետների մշակած ռումբը խառապատիկ հզոր է ամերիկյան ռումբից, իսկ պայթյունի կենտրոնում ջերմաստիճանը կրկնակի բարձր է: Վակուումային ռումբի գործողության սկզբունքը թիրախի վրա հատուկ վառելանյութի ցրումն է ու պայթեցումը:

«Գլխավոր ավերածությունը գործում են գերձայնային օդային հարվածային ալիքը եւ աներեւակայելիորեն բարձր ջերմաստիճանը: Կենդանի ամենայն ինչ պարզապես գոլորշիանում է: Պայթյունից հետո հողն ավելի շաս հիշեցնում է լուսնային բնահող, սակայն քիմիական կամ ռադիոակտիվ աղտոտում գոյություն չունի», նշվել է ՌԴ հանրային հեռուստատեսության հաղորդման մեջ:

ՌԴ պաշտպանության նախարարության գիտահետազոտական ինստիտուտի ներկայացուցիչ Յուրի Բալիկոյի խոսքերով, նոր ռումբի մեջ օգտագործվող նյութը տասիլից ավելի մեծ ավերիչ ուժ ունի: Այդ հզորությունը հաջողվել է ապահովել նանոտեխնոլոգիաների կիրառմամբ:

Ցման բանտարկություն՝ Ֆիլիպինների նախկին նախագահին

Ֆիլիպինների նախկին նախագահ Զոզեֆ Էստրադան երեկ մեղավոր է ճանաչվել կաշառակերության համար եւ դատապարտվել է ցմահ բանտարկության: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 70-ամյա Էստրադայի դատավարությունը բավական երկար է տեւել՝ 2001-ի հոկտեմբերից մինչեւ 2007-ի հունիս:

Զոզեֆ Էստրադան, որը նախկին դերասան է, մեղադրվում է եկամուտների ֆողարկման, կաշառակերության եւ մի շարք ուրիշ տնտեսական հանցագործությունների մեջ: Միաժամանակ հաղորդվում է, որ դատարանը հանել է կեղծ վկայություն տալու մեղադրանքը:

Էստրադայի հաշիվներում սառեցված 87 միլիոն դոլարը պետությանը կփոխանցվի որպես «տուգանք»: Այդ գումարը գոյացել է խաղային բիզնեսի, արժեթղթերի եւ ծխախոտի վաճառքի անօրինական եկամուտներից:

Նախկին նախագահը մատիր է դատավճիռը գանգատարկել երկրի գերագույն դատարանում: Էստրադայի կարծիքով, դատավարությունը քաղաքական ասպարեզ է ունեցել, իսկ դատավորներն ի սկզբանե իրեն մեղավոր ճանաչելու մտադրություն են ունեցել:

Ըստ Էստրադայի, իր դեմ գործում են կաթոլիկ եկեղեցին եւ ներկայիս նախագահ Գլորիա Առոյոն, որի իշխանության գլուխ անցնելն անօրինական կլիներ նախկին նախագահի արդարացման դեպքում:

Էստրադայի խոսքերով, ինքը երկու անգամ մերժել է մեղադրանքների վերացման դիմաց երկիրը լքելու Առոյոյի առաջարկը: Դատավարության ամբողջ ընթացքում նախկին նախագահը բնակվել է սեփական շքեղ հարկաբաժնում:

Ըստ Ֆրանսպրեսի, մեղադրական դատավճիռը կարող է անկարգություններ առաջացնել Ֆիլիպիններում, քանի որ Էստրադան մինչեւ օրս ժողովրդականություն է վայելում աղքատների շրջանում: 2001-ին նրա հազարավոր կողմնակիցներ փակել էին նախագահական պալատի մատույցները, որպեսզի վերականգնեն նրա իշխանությունը: Գլորիա Առոյան առաստակարգ դրություն էր հայտարարել: Զորքի եւ ցուցարարների բախումների ժամանակ 4 մարդ էր զոհվել:

ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՑ ԱՌԱՋ

Հրապարակվել է Պաղեստին-Իսրայել համաձայնագրի նախագիծը

Պաղեստինյան MAAN լրատվական գործակալությունը պնդում է, թե իսրայելական աղբյուրներից ստացել է Պաղեստին-Իսրայել հաշտության պայմանագրի նախագիծը, որը նոյեմբերին Վաշինգտոնում ներկայացվելու է Մերձավոր Արեւելքին նվիրված խորհրդաժողովում: Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտի դիվանատունը չի հաստատել տվյալ հաղորդումը:

Փաստաթղթի նախագծի համաձայն, Իսրայելի կողքին պետք է ստեղծվի Պաղեստին պետությունը: Նախագծի գլխավոր սկզբունքները հետեւյալներն են:

1. Իսրայելը պարտավորվում է սահմանափակ ժամկետում վերջ դնել Այսրհորդանանի օկուպացմանը, ինչը ենթադրում է իսրայելական ավանների ապաշինարարական վերացում եւ բնակիչների տարհանում: Ազատվող տարածքն անմիջապես հանձնվում է Պաղեստինի իշխանություններին: Այսրհորդանանը եւ Գազան այլեւս վանգ չեն ներկայացնի Իսրայելի համար:

2. Պաղեստինի պետությունը կստեղծվի 1967-ի սահմաններում: Կոնկրետ սահմանագծումը հաշվի կառնի անվտանգության, ժողովրդագրության եւ մարդասիրության սկզբունքները: Իսրայելը կպահպանի բնակեցված խոշոր միջնատարածքները: Կապահովվեն Պաղեստինի տարածքային ամբողջականությունը եւ տնտեսական զարգացման հեռանկարները:

3. Երուսաղեմը կդառնա երկու պետությունների մայրաքաղաք (հրեական թաղամասերը՝ Իսրայելին, արաբականները՝ Պաղեստինին): Քաղաքի երկու մասերի տեղական իշխանությունները եռանդագին կգործակցեն երուսաղեմցիների կենսապայմանների բարելավման նպատակով:

4. Երուսաղեմի սրբավայրերը բաց կլինեն բոլոր դավանանքների ներկայացուցիչների առջեւ: Հին քաղաքում ստեղծվելիք հատուկ վարչակազմը կապահովի իսրայելցիների եւ պաղեստինցիների այցելությունները:

5. Պաղեստին պետությունը կլինի պաղեստինցիների ազգային տունը, Իսրայելը՝ հրեաների:

6. Պաղեստինցի գաղթականների խնդիրը կքննարկվի վերջնական պայմանագրի երջանակներում, հաշվի առնելով նրանց կրած զրկանքները եւ քաղաքացիական իրավունքները:

7. Երկու կողմերը վերջ են դնում հակամարտությանը, որպեսզի օգնություն ստանան միջազգային ընկերակցությունից: Նրանք համատեղ պայքար են ծավալում ահաբեկչության եւ բռնությունների դեմ:

8. Երկու կողմերը տվյալ համաձայնագիրը քննարկելիս հաշվի են առնում Արաբական պետությունների լիգայի հաշտության ծրագրում շարադրված սկզբունքները:

Հաղորդվում է, որ տվյալ պայմանագիրը պետք է ստորագրվի նախքան վաշինգտոնյան խորհրդաժողովի բացումը, ապա, համաշխարհային ընկերակցության հավանության դեպքում, ստանա միջազգային բանաձեւի կարգավիճակ:

Ճապոնիայի վարչապետը հեռանում է

Ճապոնիայի վարչապետ, Լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Սինձո Աբեն հրաժարականի դիմում է ներկայացրել ԼԴԿ ղեկավարությանը: Այդ մասին հաղորդում են Կիոդո եւ Ֆրանսպրես գործակալությունները, վկայակոչելով ճապոնական TBS հեռուստաալիքի տվյալները:

ԼԴԿ գլխավոր քարտուղար Տարո Ասոն հաստատել է Աբեի մոտալուտ պաշտոնաթողության լուրը: Ասոն համարվում է վարչապետի պաշտոնում Աբեի հավանական իրավահաջորդը:

Սեպտեմբերի 10-ին Աբեն հայտարարել էր, որ հրաժարական կա, եթե կառավարությունը չերկարաձգի հակահաբեկչական այն օրենքը, որի գործողության ժամկետը լրանում է նոյեմբերի 1-ին: Տվյալ օրենքը Ճապոնիային թույլ է տալիս տեխնիկական օժանդակություն ցուցաբերել Աֆղանստանում տեղաբաշխված ամերիկյան զորքերին:

Հաղորդվում է, որ օրենքի երկարաձգման շուրջը ընդդիմադիր դեմոկրատական կուսակցության հետ բանակցությունների ձախողումը վարչապետի հրաժարականի գլխավոր պատճառներից մեկն է:

Մյուս պատճառը հուլիսի 29-ի խորհրդարանական ընտրություններում լիբերալ-դեմոկրատների կրած անհաջողությունն է: Վերջին 50 տարում առաջին անգամ Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը խորհրդարանում մեծամասնություն չի կազմում, ինչն անչափ դժվարացրել է վարչապետի գործը: Սինձո Աբեն կուսակիցներին խոստովանել է, որ ինքը հոգնել է եւ այլեւս «քաղաքական եռանդ» չունի:

Աբեի հրաժարականի պատճառներից մեկն էլ կառավարությունում ծագած մի շարք սկանդալներն են: **«Ազգն»** արդեն գրել է սեպտեմբերի սկզբներին Ճապոնիայի գյուղատնտեսության նախարարի տված հրաժարականի մասին, որը տեղի ունեցավ նրա նշանակումից ընդամենը մեկ շաբաթ անց: Հրաժարականը կապված էր կաշառակերության մեղադրանքների հետ: Իսկ ավելի վաղ՝ ամռանը մեկ ուրիշ գյուղնախարար կյանքին վերջ էր տվել համանման մեղադրանքների պատճառով:

Սինձո Աբեն ԼԴԿ ղեկավարությանը խնդրել է հնարավորինս շուտ անցկացնել կուսակցության նախագահի նոր ընտրություններ, որպեսզի երկրում քաղաքական դատարկություն չառաջանա:

OPEC-ը կավելացնի նավթահանույթը

Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը՝ OPEC-ը որոշել է 2007-ի նոյեմբերի 1-ից նավթարդյունահանման ծավալներն ավելացնել օրական 500 հազար բարելով, հաղորդում է Բլումբերգ գործակալությունը:

Որոշման պատճառն այն երկյուղներն են, թե հումքի բարձր գները բացասական ազդեցություն կգործեն համաշխարհային տնտեսության վրա: Նոյեմբերից OPEC-ը կարդյունահանի օրական 27,2 մլն բարել նավթ: Կազմակերպության անդամ երկրներն արդեն այժմ գերազանցում են նավթահանույթի սահմանված ծավալները: Որոշ տեղեկությունների համաձայն, օրական 25,8 մլն բարել վոնտայի պայմաններում օգոստոսին արդյունահանվել է 26,7 մլն բարել:

OPEC-ի որոշումն անակնկալ է եղել վերլուծաբաններից շատերի համար եւ արդեն իսկ ազդել է նավթի համաշխարհային գների վրա: Երեքշաբթի օրը Նյու Յորքի ապրանքահումքային բորսայում մեկ բարել նավթը վաճառվում էր 78,32 դոլարով, բայց որոշման հրապարակումից հետո նավթի գինն իջել է գրեթե մեկ դոլարով:

Հայաստանում «Ռուսական խոսքի օրեր»

Սեպտեմբերի 12-ին Հայաստանի եւ Ռուսաստանի գրողների միությունների միջեւ ստորագրվեց բարեկամության, համագործակցության եւ փոխօգնության գործող պայմանագիրն ամրապնդող փաստաթուղթ: Այս առթողությամբ պատշաճաթես բացվեցին «Ռուսական խոսքի օրերը» Հայաստանում:

ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը նշեց, որ պայմանագիրը գործում է շուրջ 10 տարի, եւ այդ տարիների ընթացքում բավականին մեծ աշխատանք է տարվել, մասնավորապես, ռուսական եւ հայկական բազմաժանր ստեղծագործությունները թարգմանելու ուղղությամբ:

«Բարեկամության եւ համագործակցության ռուսական ընկերությունն ամեն կերպ նպաստում է երկու երկրների միջեւ գրական, տեղեկատվական փոխանակումների վերականգնմանը: Այդ նպատակով այստեղ ենք բերել մի շարք գրքեր, որոնք կաղացուցեն, որ մեր երկրներում գրականությունը եւ պոեզիան աղագա ունեն: Գրականության միջոցով է, որ հատկապես սերտ կապեր պիտի ունենանք միմյանց հետ», ընդգծեց ռուսական պատվիրակության ղեկավար, Հայաստանի հետ բարեկամության եւ համագործակցության ռուսական ընկերության նախագահ Վիկտոր Կրիվոպոսկովը:

ՌԴ գրողների միության քարտուղար Նիկոլայ Պերեյասլովն ասաց, որ հայ եւ ռուս գրողների հանդիպումները թեեւ հաճախ չեն լինում, սակայն սովորաբար արգասաբեր են:

Մինչեւ սեպտեմբերի 17-ը կանցկացվեն բազմաբնույթ մշակութային միջոցառումներ՝ նվիրված ռուսաց լեզվին, Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ գրական, տեղեկատվական կապերի ամրապնդմանը: «Ռուսական խոսքի օրերը» կազմակերպել է Հայաստանի հետ բարեկամության եւ համագործակցության ռուսաստանյան ընկերությունը:

Ռուսաց խոսքը՝ մեկ շաբաթով

Երեւան ժամանած ռուս գրողները եւ արվեստագետները մի քանի օր երեւանի գիտական, կրթական ու մշակութային օջախները կլցնեն իրենց մայրենի լեզվի հրապույրով, ջանալով վերարթնացնել ռուսերենի հանդեպ մեզանում եղած նախկին սերն ու գորովանքը, որ այսօր տիրաբար վայելում է անգլերենը: Այդ ձգտումով մղված Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը 2007-ը հայտարարեց Հայաստանում ռուսաց լեզվի տարի, որը ենթադրում էր ռուս գրականության եւ արվեստի օրեր՝ հագեցած բազում հանդիպումներով ու միջոցառումներով: Դրա սկիզբը դրվեց երեկ՝ Գիտությունների ազգային ակադեմիայում բացված «Ռուսական խոսքի» շաբաթով, նախաձեռնությամբ Հայաստանի եւ Ռուսաստանի գրողների միությունների, Հայաստանի մշակույթի նախարարության: Ռուս գրողները դասակարգեն չեն եկել. որպես գիր ու գրականություն մեծարող ժողովրդի զավակներ, նրանք բերել են վերջերս հրատարակված ամսագրեր, գրքեր՝ ձոնված մեր ժողովրդին ու երկրին, գրականությանն ու լեզվին, նույնիսկ՝ Արցախին: Վերջինի վկայությունն է հայ-ռուսական համագործակցության միության նախագահ Վիկտոր Կրիվոպոսկովի՝ «Ընբոսս Ղարաբաղը» փաստավավերագրական գիրքը, որ երեկ առաջին անգամ ներկայացվեց մեր հանրությանը:

Կեսօրին ռուս գրողների պատվիրակությունը հյուրընկալվեց Գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանի աշխատասենյակում, ուր ջերմ ու մտերմիկ զրույց ծավալվեց գրական կապերի ընդլայնման, թարգմանական գրականությանը նոր թափ հաղորդելու, մշակութային դարավոր ավանդույթների ավելի տարածման եւ այլ հարցերի մասին:

Ռ. Պ.

Վերացարկում հայելու միջոցով-ինքնազննում

Գաղափարները, որ ընկած են «Ուղեւորություն արտաքինից դեպի ներաշխարհ՝ ֆորմաներով եւ գույներով» աշխատանքների հիմքում, սեփական ինքնության ճանաչման որոնումներում նկարչուհի Ասիլվային հետեւող մտածելաոճի մի ողջ համակարգ է: Երեւույթների ու պատկերների բացահայտումների համար նա ընտրել է հայելին՝ իբրեւ խորհրդանիշ առարկա: Հայելին երեւույթի ֆիզիկական արտաքսածենումից դուրս այլիմաստ նշանակություն է ձեռք բերել իր արվեստում: Նյութի երկարատեւ ուսումնասիրությունը նրան մոտեցրել է հոգեբանության, փիլիսոփայության, բնագիտության ասպարեզներին: Եվ տարիների իր ստեղծագործական աշխատանքների մեծ մասը կրում է դրանց ներգործությունը: Աշխարհը դիտել հայելու միջոցով եւ սեփական ինքնությունը փորձել ճանաչել հարթ առակու արտաքսածենման ֆիզիկական երեւույթից անդին: Անցում կատարել արտաքինից ներաշխարհ՝ ֆիզիկայից մետաֆիզիկային՝ հասնելով նոտբ սահմանագծին:

«Ես նայում էի իմ գիտակցության հայելու մեջ, որն արտացոլում էր այն, ինչ ես եմ իրականում, այլ ոչ թե ինչ-ոիսին կուզենայի: Ես է, որ պետք է աշխատեմ ինձ վրա՝ մոտենալու համար այն կերպարին, որ կուզենայի տեսնել հայելու մեջ»: Իբրեւ խորհրդանիշ, հայելին ներաշխարհը պեղելու միջոցներից մեկը դարձնելով՝ հեղինակը ինքնամաքրումի, արդարամտության եզրեր է որոնում: Եվ երբ գտնում է բանալին՝ մտքի հստակության ու անկեղծության, այնքան բառերն անիմաստ են դառնում: Ու գործի է դրվում գույնի ու պատկերաձեւերի միջոցը: Արվեստը ինքնաճանաչման գերագույն խնդրին ծառայեցնելը, շատ տարված արահետ է, բայց եւ վտահելի: Ու սա արդարացված է, երբ արվեստագետը անկեղծ է իր ու իր հորինվածքի հետ: Ներքին ինքնախնամքն ու ճշտապահությունը բերում են մտքի հանդարտության ու մաքուր վիճակին, որն է յուրաքանչյուր անձի կատարյալ ներդաշնակության գլխավոր գրավականը:

Մտային այս ուղեւորությունները երկրաչափական ֆիգուրաթիվ արտահայտություններ են ստացել Ասիլվայի այն աշխատանքներում, որ նա երեկ ներկայացրեց Ազգային պատերազմի կերաստահում: Նյութի զանազան միջոցների (թուղթ, կարտոն, ֆոլգա) գործածմամբ եւ խառը տեխնիկայով (աղլիկացիա, գրաֆիկա, ջրաներկ եւ այլն) արված այս գործերում պատկերի ճշգրիտ զգացողություն կա, ֆորմաների ճաշակ՝ գույների «խիստ» կարգապահություն՝ սեփ ու արծաթափայլի, կարմիրի, ճերմակի, դարչնագույնի համադրությամբ:

Ասիլվան արմատներով պոլսեցի է, գեղարվեստական կրթությունը ստացել է Փարիզում, այժմ ապրում ու ստեղծագործում է Ֆրանսիայի մայրաքաղաքում: Նախապես հետեւողն է եղել կերպարվեստի ավանդական մեթոդների, ակադեմիական ոճի: Բայց 25 տարի արդեն աբստրակտ արվեստի մոդեռն ոճի մեջ է իր գաղափարներն իրացնում:

«Գաղափարները աբստրակտ ոճով տալը ավելի դժվար է: Աբստրակտ կամ ֆիգուրատիվ՝ տարբերություն չկա: Մարդը կտեսնե ան, ինչին վարժված է: Երբ առարկա մը հակառակը դարձնես, մարդը չի ճանչնար: Այլը, ուղեղը վարժված են որոշ ձեւով մը առարկաները տեսնել, աբստրակտը այլեն այդ վարժությունը կհանե: Ես ֆիգուրատիվ նկար մը ունեի՝ մարդը՝ ձեռքերը պարզած, երբ նկարը հակառակ դարձուցի, որեւէ մեկը չհասկցավ, որ նույն նկարն է»:

Գեղանկարչության, արվեստի արդի մոտեցումները ավելի հաճախ են անտրամաբանական ու անհեթեթ դրսեւորումներ ստանում, սա մեզ փորձում է թույլ հուշել, թե արվեստն անելիք չունի այլեւս: Միանգամայն հակառակ ուղղությամբ է Ասիլվայի հայացքը: «Այսօրվա գեղանկարչությունը շատ տարբեր ճամփու վրա է: Ամեն բան փոխված է՝ մեր մտածելակերպը, ապրելակերպը, նկարիչներու գործերն ալ փոխված են: Չենք կրնար հինին կապվելով՝ ետ քալել, սահմանված ենք առաջ երթալ: Իսկական նկարիչները իրենց ժամանակն միշտ ալ առաջ են գացած: Նկարչության ճամփան բաց է: Գիտությունը, ճիշտ է, կա, շատ հառաջացած է, բայց մենք միշտ երազելու պետքությունը ունինք: Այս նկարներուն եթե նայիք, ձեզի կառնեն, ուրիշ աշխարհ կտանին»:

Փարիզեցի հայ նկարչուհին հույս ունի, որ մի օր էլ երեւանն է նկարիչներին դեպի իրեն ձգելու, որ քաղաքները արվեստագետ չեն ստեղծում, եւ որ «արվեստագետը ինքն իր մեջ կըլլա»:

Ներկայացնենք արվեստաբան Շահեն Խաչատրյանի կարծիքը. «Ֆրանսիայից եկած հայ նկարչուհին մեզ ցույց տվեց ամեն բանից առաջ բարձր ճաշակ: Այս ցուցահանդեսը տեսնելուց հիշեցի Վիկտոր Հյուգոյի այն խոսքը, որ ճաշակը տաղանդի բանականությունն է: Այստեղ ոչ միայն զգում ենք բարձր ճաշակ, այլեւ տեսնում պատկերի կառուցման առանձնահատկություններ, արդիական ձեւերի, գույների այնպիսի ներդաշնակություն, որ ստեղծում է արվեստի ազնիվ մթնոլորտ, որ մղում է մտքության, ճշտության, մտածումի: Սրանք արվեստագետի համար բացառիկ արժանիքներ են, եւ պետք է գնահատել: Առանձնապես ուրախ եմ այն բանի համար, որ իր մեջ ապրում է սխանչելի մի հայուհի, մեկը, որ կարող է Ֆրանսիայից գալ ու Հայաստանի որբանոցի երեխաների ճակատագրով մտահոգվել, նրանց հետ ժամանակ անցկացնել, մի խոսքով սրտի պարտք կատարել»:

Ցուցահանդեսի առիթով Փարիզում հրատարակվել է ֆրանսերեն, հայերեն եւ անգլերեն ճաշակավոր կատալոգ, արվեստաբան Յուրի Խաչատրյանի խմբագրությամբ:

ՄԵԼԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՒՅԺ

Հարություն Օվեի Սիմոնյան

Սեպտեմբերի 2-ին Շվեյցարիայում վախճանվեց սփյուռքահայ հայտնի մեկենաս, հայ մշակույթի նվիրյալ Հարություն Օվեի Սիմոնյանը: Լոս Անջելեսում հաստատվելուց առաջ եւ հետո նա սատարեց չորս տասնյակից ավելի գրքերի հրատարակությանը, որոնց թվում՝ «Սասնա ծռերի» Դ հատորը, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն» շարքի «Թալինը», «Լոռին», «Տավուշը», Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Օտյանի, Սիամանթոյի, Զատել եւ Հրանտ Ասատուրների, Միխայել Կյուրճյանի, Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Գարեգին Ա կաթողիկոսի գերազանցորեն անտիպ երկեր, Նվարդ Թումանյանի, Էդվարդ Զրբաշյանի, Գեղամ Սեւանի, Վարազդատ Հարությունյանի եւ այլ հեղինակների արժեքավոր աշխատություններ, ասես շարունակելով ավագ եղբոր՝ տաղանդավոր արձակագիր, հրապարակագիր, խմբագիր Սիմոն Սիմոնյանի՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմում դադարած գրահրատարակչական ծավալուն գործունեությունը: Հարություն Սիմոնյանը խորունկ սիրով էր տոգորված հայրենիքի եւ հայ մշակույթի հանդեպ, մի բան, որ սասունցի Օվեի զավակների հոգում խտացված է ու փոխանցվում է սերնդեսերունդ. վերջերս անգլերենով լույս տեսավ նրա որդու՝ Հովհան Սիմոնյանի «Համբեն» մենարժեք աշխատությունը:

Խորապես ցավակցում ենք Հարություն Սիմոնյանի հարազատներին:

Լույս ու խունկ նրա հիշատակին:

ՄԱՐԳԱՐ ՎԱՀԱՆ,
ՎԱՐԴԵՐԵՍ ԳԱՐԱԳՈՇՅԱՆ,
ՊՈՂՈՍ ԳՈՒՐԵԼՅԱՆ,
ԷԼՅԵՐ ՂԱՎԱԹՅԱՆ,
ՍՏԵՓԱՆ ՋՈՓՅԱՆ

«Ազգը» խորապես վշտակցում է հանգուցյալի հարազատներին եւ ընկերներին:

«Ստամբուլի բիձը» վեպով Էլիֆ Շաֆակը դառնում է Թուրքիայի մեծ գրողներից մեկը

«Լը կանար անբենեի» տաղանդավոր երգիծանկարիչ Պոնչոն այսպես է ներկայացրել Ստամբուլի կենտրոնում հայտնված օտարերկրացի կնոջը. «Ես այս քաղաքին անծանոթ եմ, չէի՞ ասի՝ որտեղ է գտնվում Հայաստան պողոտան»:

Փարիզի «Լը կանար անբենե» երգիծաթերթը տեղեկացնում է, որ «Ֆեբուս» հրատարակչությունը լույս է ընծայել 36-ամյա թրուքի էլիֆ Շաֆակի «Ստամբուլի բիձը» վեպը՝ թարգմանված անգլերեն բնագրից: Նշվում է, որ տվյալ գրքով հեղինակն ընդվզում է Թուրքիային առնչվող բոլոր քարացած պատկերացումների դեմ:

Վեպն արկածների, կրքի, մոլեգնության եւ հումորի յուրօրինակ խառնուրդ է: Նախաբանի հեղինակ Ամին Մաալուֆը գրում է, որ գիրքը թուրքերի «անհանգստության» մասին է: Իսկ վերջաբանում «անգուտ» Շաֆակը պատմում է, որ ինչ էր մնացել Թուրքիայում իրեն 3 տարվա բանտարկության դատապարտելիս գրքում թուրքերի ազգային արժանապատվությունը վիրավորելու համար (ՔՕ 301-րդ հոդված):

Ըստ փարիզյան թերթի, «Ստամբուլի բիձը» վեպն անտարբեր չի թողնում ընթերցողին, քանզի գրված է մեծ վարպետությամբ: Խոսքը մի տարօրինակ մենամարտի մասին է, որին մասնակցում է երկու ընտանիք: Մեկի անդամներն ամերիկահայեր են, մյուսինը՝ ստամբուլցի թուրքեր: Ամեն էջում առկա են ծիծաղ, լաց, զարմանք եւ այլն:

Ստամբուլի Կազանչի ընտանիքում միայն կանայք են. տղամարդիկ շատ արագ անհետանում են կամ լվվում: Այդ ընտանիքում տիրում է իսկական թուրքական միջավայր՝ իր տարօրինակություններով եւ ժամանակավրեպ սովորույթներով: Ընտանիքի մայրը՝ Գյուլսումը, իշխում է 4 դուստրերի վրա, որոնցից յուրաքանչյուրն առանձնահատուկ է:

Կրտսերը՝ 19-ամյա Զելիհան, սկանդալի պատճառ է դառնում: Նա անսանձ է, ականջին հագցված օղակ է կրում, չափազանց կարճ շրջազգեստ է հագնում եւ բարձր, սուր կրունկով կոշիկներ: Հենց առաջին գլխում Զելիհան Ստամբուլում շրջում է վիժեցում կատարելու նպատակով, չմոռանալով հընթացս ձեռք բերել թեյի հերթական սպասը: Տուն վերադառնալով՝ նա ցույցերին եւ մորը սառնորեն հայտարարում է, որ ինքը չի ազատվել անցանկալի հղիությունից, եւ որ աղջիկ երեխա է ծնվելու: «Նա բիձ կլինի: Դու ընտանիքի խայտառակությունն ես: Ահա թե ինչ է պատահում, երբ հագնվում են պոռնիկի պես», բղավում է մայրը:

Բիձն անվանակոչվում է Ասյա եւ դառնում է վեպի հերոսուհին: 20 տարեկանում նա հաճախում է «Կունդերա» սրճարան, որտեղ հավաքվում են Հայոց ցեղասպանության թեմայից խուսափող թուրքերը: Ասյան դիմավորում է Ամերիկայից եկած մի հեռավոր ազգականուհու՝ Արմանուշին, որին Ամի են անվանում: Վերջինս Թակմախյան ընտանիքից է, բայց անունը՝ Մուսաֆան, Կազանչի տոհմից է: Ստամբուլում իրեն հյուրընկալողների մոտ հասնելուն պես Ամին բարձրաձայն հայտարարում է, որ ինքը հայուհի է:

Սկսվում է մեծ առճակատում հայոց անցյալի կապակցությամբ: Բանավեճերի կենտրոնում ցեղասպանության թեման է: Եվ էլիֆ Շաֆակը չի վախենում թուրքական միջավայրում սուր հարցադրումներ անելուց: Առճակատումը հետաքրքրական է, ուժգին: Հայուհի Ամին եւ թրուքի Ասյան ընկերանում են եւ հնարավոր դարձնում անսպասելի մերձեցումները:

Շաֆակը ողբերգական թեմայի շուրջ իսկական վեպ է հյուսում մեկը մյուսից տարօրինակ կերպարներով եւ անսպասելի հանգուցալուծումներով: Վեպը գրված է ամեն ինչ սրբող-տանող թեթեւությամբ:

Պ. Բ.

Շախմատային թագի համար մրցավեճը սկսվում է

Այսօր Մեխիկոյում կտրվի շախմատի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի մեկնարկը: Ութ ուժեղագույն գրոսմայստերները, որոնց թվում է եւ Հայաստանի շախմատիստների անվիճելի առաջատար Լեւոն Արոնյանը, երկու շրջանից բաղկացած մրցաշարի արդյունքներով կորոշեն շախմատային թագի դափնեկրին: Մեխիկոյում Լեւոն Արոնյանի (2750) մրցակիցները կլինեն Վիշվանաթան Անանդը (2792), աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կրամնիկը (2769), Սերգեյ Մորոզեւիչը (2758), Պետեր Լեկոն (2751), Պյոտր Սվիդլերը (2735), Բորիս Գելֆանդը (2733) եւ Ալեքսանդր Գրիշչուկը (2726): Չեմպիոնը հայտնի կդառնա սեպտեմբերի 30-ին: Եթե մեկից ավելի մասնակիցներ վաստակեն հավասար միավորներ, ապա նրանց միջեւ առագ շախմատի կանոններով լրացուցիչ մրցախաղ կանցկացվի:

Մրցաշարի մասնակիցների մեջ 5-րդ վարկանիշն ունեցող Լեւոն Արոնյանն իր մարտավկա Գաբրիել Սարգսյանի հետ մեկ շաբաթ առաջ է մեկնել Մեխիկո, ինչը կօգնի նրան կլիմայափոխվելու, ընտելանալու ժամային գոտիների փոփոխությանը: Մրցախաղը սկսվելու է տեղական ժամանակով 14-ին (Երեւանի ժամանակով՝ 24-ին): Սեպտեմբերի 17-ը, 22-ը եւ 26-ը հանգստյան օրեր են մասնակիցների համար:

24-ամյա հայ գրոսմայստերը շախմատային փառահեղ ոտի է անցել եւ հուսանք, որ նրա նվաճումների գագաթնակետը կլինի աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանանալը: Մասնագետներից շատերը շախմատային թագը նվաճելու Արոնյանի հնարավորությունները բարձր են գնահատում՝ գտնելով, որ հայ գրոսմայստերն արդեն պատրաստ է գրոհելու շախմատային օլիմպոսը: Այդ են վկայում վերջին տարիներին նրա կայուն ելույթները եւ նվաճումները միջազգային ամենահեղինակավոր մրցաշարերում: Բումեյֆերներն աշխարհի չեմպիոն դառնալու Արոնյանի հնարավորությունները գնահատել են 1:5 հարաբերությամբ: Եկեք վերհիշենք Լեւոնի հաղթական նվաճումները: 2005-ին Խանտի Մանսիյսկում Լեւոնը դարձավ աշխարհի անդրանիկ գավաթակիրը: Հաջորդ տարի առաջին անգամ մասնակցելով Լինարեսի գեոմրցաշարին, Արոնյանը հաղթող ճանաչվեց աշխարհի ուժեղագույն շախմատիստների մրցավեճում: Այնուհետեւ Թուրինում գլխավորելով Հայաստանի հավաքականը, իր թիմակիցների հետ փառահեղ նվաճման հասավ շախմատային օլիմպիադայում՝ մեծամասն նպաստելով օլիմպիական չեմպիոնի ոսկե մեդալների նվաճմանը: Այնպես 5-3 հաշվով հաղթելով ռուսասանցի Պյոտր Սվիդլերին, հայ շախմատիստը նվաճեց Ֆիշերի շախմատի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը, տարեվերջին էլ Մոսկվայում առաջին տեղը գրավեց Միխայիլ Տալի հուշամրցաշարում: Արոնյանը հաղթանակով սկսեց նաեւ մրցաշրջան-2007-ը: Հունվարին հոլանդական Վեյք Ան Զեե քաղաքում անցկացված ավանդական մրցաշարում Արոնյանը Թոփալովի եւ Ռաջաբովի հետ բաժանեց 1-3-րդ տեղերը՝ վաստակելով 8,5 միավոր: Ընդ որում, այդ մրցաշարում Լեւոնն անպարտելի էր: Նա մեծ վերելքով անցկացրեց նաեւ մայիսին Երեւանում աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կրամնիկի հետ կայացած առագ շախմատի մրցախաղը: Առաջին պարտիայում անհաջողության մատնվելուց հետո հայ շախմատիստն այնուհետեւ 3 անընդմեջ հաղթանակ տարավ եւ մրցախաղը շահեց 4-2 հաշվով: Իսկ օգոստոսին Մայնցում հաղթելով Անանդին, պահպանեց Ֆիշերի շախմատի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Իսկ ինչպիսի՞ն են Արոնյանի անձնական ցուցանիշները մրցաշարի մասնակիցների հետ դասական շախմատի մրցախաղերում: Հայ շախմատիստը դրական արդյունքի է հասել Լեկոյի (+3=7-1), Սվիդլերի (+3=10-2) եւ Գրիշչուկի (+2=3-1) հետ մրցախաղերում: Կրամնիկի հետ արդյունքը հավասար է (+3=6-3), իսկ ահա Անանդի (+2=8-3), Գելֆանդի (+2=10-4) եւ Մորոզեւիչի (+1=3-4) հետ մրցախաղերում առայժմ հայ շախմատիստի հաշվեկշիռը բացասական է: Բայց իհարկե այս վիճակագրությունն առանձնակի նշանակություն չունի: Մեխիկոյում առաջին ոլան կմղվեն շախմատիստների ներկայիս մարզավիճակը, հոգեբանական եւ ֆիզիկական պատրաստությունը:

Ռեւանշը չկայացավ

Երեկ Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում Հայաստանի երիտասարդական հավաքականը հյուրընկալել էր ուկրաինացիներին, որոնց մրցակցի դաշտում զիջել էր 0-4 հաշվով: Մեր ֆուտբոլիստներին չհաջողվեց ռեւանշի հասնել: Եթե առաջին խաղակեսում մեր ընտրանին ոչ թե շատ վստահաբար պահեր ստեղծեց, ապա ընդմիջումից հետո հայ ֆուտբոլիստների խաղն իսպառ կազմալուծվեց: Իսկ ուկրաինացիները բավական ակտիվ խաղ ցուցադրելով, օգտվելով մեր դարպասապահի եւ պաշտպանների անփույթ խաղից, 2 գոլ խփեցին ու կրկին հաղթեցին:

Հաշիվը բացվեց 39-րդ րոպեին, երբ Ալեքսեյ Անտոնովի հարվածն անհաջող հետ մղեց դարպասապահ Գրիգոր Մելիքեթյանն ու վրա հասած Կոնստանտին Յարոշենկոն գրավեց դարպասը: 63-րդ րոպեին էլ Դենիս Օլեյնիկը խաբս տվեց մեր պաշտպանին, ներխուժեց տուգանային հրապարակ, որտեղ Մկոյանը նրան վայր գցեց: 11 մ հարվածը տուժողն ինքն էլ իրացրեց:

Ընտրական 2-րդ խմբի մյուս խաղում չեխերը սեփական հարկի տակ 8-0 հաշվով ջախջախեցին Լիխտենշտեյնի հավաքականին:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուկրաինա	3	2	0	1	7-2	6
2. Թուրքիա	2	2	0	0	5-3	6
3. Չեխիա	2	1	1	0	9-1	4
4. Հայաստան	4	1	1	2	2-7	4
5. Լիխտենշտեյն	3	0	0	3	2-12	0

Առաջատարները չորսն են

Կաուլովի Վարի քաղաքում ընթացող մրցաշարում Վլադիմիր Հակոբյանն ու Սերգեյ Մովսիսյանը չորս տուրից հետո Ռուալան Պոնոմարյովի եւ 3ան Թիմանի հետ 2,5-ական միավորով գլխավորում են մրցաշարային աղյուսակը:

3-րդ եւ 4-րդ տուրերում մեր շախմատիստներն իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի արդյունքով: Եթե Դավիթ Նավարայի հետ մրցավեճում Հակոբյանը հաշտություն կնքեց արդեն 27-րդ քայլում, ապա մրցաշարի ամենաստարեց ու փորձառու մասնակից Վիկտոր Կորչնոյի հետ պարտիայում կողմերը հաշտության ձեռք մեկնեցին միայն 71-րդ քայլում: Իսկ ահա Մովսիսյանը 3-րդ տուրում արագ՝ ընդամենը 13 քայլ կատարելով, միավորը բաժանեց Ալեքսեյ Շիրովի հետ: Ավելի համառ պայքար ծավալվեց հաջորդ տուրում, Պոնոմարյովի հետ պարտիայում, որը 42-րդ քայլում ավարտվեց ոչ-ոքի:

Այնա պարտիաների արդյունքներն այսպիսին են. Շիրով-Թիման՝ 0-1, Լազնիչկա-Նավարա՝ 0,5-0,5, Թիման-Լազնիչկա՝ 0,5-0,5, Կորչնոյ-Պոնոմարյով՝ 0-1: Առայժմ համեմատաբար անհաջող են հանդես գալիս Վիկտոր Կորչնոյն ու Ալեքսեյ Շիրովը, որոնք դեռեւս հաղթանակ չեն տարել եւ մեկ միավորով եզրափակում են աղյուսակը:

Շախմատի մրցաշար ՃԼՄ ներկայացուցիչների մասնակցությամբ

«Դե Ֆակտո» ամսագիրը շախմատի Հայաստանի Ֆեդերացիայի եւ Երեւանի Կենտրոն համայնքի թաղամասերանի հետ համատեղ սեպտեմբերի 19-20-ին շախմատիստի կենտրոնական տանը կազմակերպելու է շախմատի կայծակնային մրցաշար ՃԼՄ ներկայացուցիչների միջեւ: Ընդ որում յուրաքանչյուր ՃԼՄ ներկայացված պետք է լինի ընդամենը մեկ մասնակցով: Այս մասին «Փաստարկ» ակումբում կայացած հանդիպման ժամանակ տեղեկացրին մրցաշարի կազմկոմիտեի նախագահ Գրիգոր Հովհաննիսյանն ու Հայաստանի շախմատի կանանց հավաքականի մարզիչ Արսեն Եղիազարյանը:

Հայտերի ներկայացման վերջին ժամկետը սեպտեմբերի 17-ն է: Մրցաշարի բացման արարողությունը տեղի կունենա սեպտեմբերի 19-ին, ժամը 17-ին, իսկ հաջորդ օրը մրցաշարի ավարտից հետո մրցանակներ կհանձնվեն լավագույն արդյունքի հասած 3 մասնակիցներին: Հաղթողին կհանձնվի գլխավոր մրցանակը՝ շախմատային նավակ պատկերող գավաթը: Նախատեսված են նաեւ դրամական մրցանակներ: Առաջին վեց տեղերը զբաղեցրած լրագրողներից կկազմավորվի ՃԼՄ-ների շախմատի հավաքականը: Իսկ առաջին 15 տեղերը զբաղեցրածները կմասնակցեն սեպտեմբերի 29-ին ՄԱԿ-ի եւ ՀՀ շախմատի Ֆեդերացիայի կողմից անցկացվող ամենամյա մրցաշարին:

Արսեն Եղիազարյանն անդրադարձավ կանանց հավաքականի առաջիկա խնդիրներին: Հոկտեմբերի վերջին հունասանում մեր հավաքականը կմասնակցի Եվրոպայի կանանց թիմային առաջնությանը: Հիշեցնենք, որ 2003-ին մեր հավաքականը դարձել էր Եվրոպայի չեմպիոն: Այն ժամանակ մրցաշարն անցկացվում էր 2 խաղատախտակի վրա, էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը (պահեստայինը Նելլի Աղինյանն էր) հիանալի հանդես եկան եւ ապահովեցին մեր թիմի նվաճումը: Այժմ, երբ յուրաքանչյուր հավաքական չորս խաղատախտակի վրա է խաղալու, ըստ Արսեն Եղիազարյանի, մեր շախմատիստուհիների հաղթելու հնարավորությունը զգալիորեն նվազել է: Պատճառն այն է, որ 3-րդ եւ 4-րդ խաղատախտակների վրա Դանիելյանին ու Մկրտչյանին հավասարազոր շախմատիստուհիներ առայժմ չունենք: Բացի մեր առաջատար երկյակից, հավաքականում ընդգրկված են նաեւ Նելլի Աղինյանը, Սիրանուշ Անդրեասյանն ու Լիանա Աղաբեկյանը:

Մինչ Եվրոպայի առաջնությունը մեր շախմատիստուհիներն լուրջ փորձություն է սպասում «Միկայի» կազմում: Ինչպես հայտնի է, անցյալ տարի «Միկան» փայլուն հանդես եկավ եւ նվաճեց Եվրոպայի ակումբային առաջնությունը: Այս տարի թիմի կազմը որոշ փոթյան չեմպիոնի տիտղոսը: Այս տարի թիմի կազմը որոշ փոփոխության է ենթարկվել՝ էլինա Դանիելյանին, Մայա Չիֆ

ԱԶԳ **Տնտեսություն**

2007թ. սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրությունը

2007թ. սեպտեմբերի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը, նախագահի տեղակալ Արթուր Ջավադյանը, խորհրդի անդամներ Ամալյա Սարիբեկյանը, Անդրանիկ Նորեկյանը, Վաչե Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչեւ սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում մակroտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային եւ դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների եւ երրորդ եռամսյակի համար կանխատեսված ուղղությունների հետ դրանց համեմատականի քննարկումը:

Գնում

2007թ. օգոստոսին՝ հուլիսի նկատմամբ արձանագրվել է 1.5% գնանկում, ընդ որում դարենային ապրանքների գները նվազել են 2.7%-ով, ոչ դարենային ապրանքներինը՝ 0.5%-ով, իսկ ծառայությունների սակագներն աճել են 0.2%-ով: Այս դայմաններում 12-ամսյա գնաճը կազմել է 1.6%՝ 2007թ. նոյտակային 4 %-ի (1.5%) դայմաններում:

Հուլիս-օգոստոս ամիսների գնաճի զարգացումները հիմնականում դայմանավորվել են դարենային ապրանքների գների, մասնավորապես «Միրգ», «Բանջարեղեն» եւ «Կարտոֆիլ» ապրանքախմբերի կանխատեսվածից ավելի խորը սեզոնային անկմամբ, որի դայմաններում օգոստոսին 12-ամսյա գնաճն էականորեն ցածր է եղել 2007թ. տարեվերջի համար կանխատեսված 5% ցուցանիշից (կանխատեսված 5% գնաճից 2.5%-ը «Հացամթերք» ապրանքախմբի գների աճի ակնկալվող նոյտասումն է: Արդեն հունիսին այս ապրանքախմբի գների աճը հանգեցրել է լրացուցիչ 1.1% գնաճի):

Արտաքին միջավայր

Օգոստոս ամիսը նշանավորվեց ԱՄՆ ստորակարգ հիփոթեքային վարկերի վերադարձելիության խնդիրներով դայմանավորված միջազգային ֆինանսական շուկաներում իրացվելիության ճգնաժամով: Վերջինս հանգեցրեց նաեւ հումքային ապրանքների նկատմամբ դահանջարկի նվազման եւ միջազգային շուկաներում դրանց գների անկման: Այսդես, նավթի միջազգային գները օգոստոս ամսվա ընթացքում նվազեցին՝ 1 բարելի դիմաց 78 ԱՄՆ դոլարից հասնելով մոտ 68 ԱՄՆ դոլարի, որը որոշակիորեն ավելի ցածր է, քան տարեսկզբում էր: Նմանատես նվազել են նաեւ բազային եւ թանկարժեք մետաղների գները: Պղնձի գինը մոտ 1 տոննայի դիմաց 8000 ԱՄՆ դոլարից նվազել է մինչեւ մոտ 7000 ԱՄՆ դոլար, իսկ ոսկու գները ունցիայի դիմաց մոտ 680 ԱՄՆ դոլարից մինչեւ մոտ 660 ԱՄՆ դոլար: Միաժամանակ, ըստ վերլուծաբանների մեծամասնության կարծիքի՝ հումքային ապրանքների գները երկարաժամկետ հատվածում կվերադառնան իրենց նախկին մակարդակին եւ նույնիսկ որոշակիորեն կաճեն:

Միջազգային շուկաներում շարունակվում է սննդամթերքի եւ հատկապես հացահատիկի գների աճը: Մասնավորապես, օգոստոսին եվրոդական եւ ամերիկյան բորսաներում արձանագրվել է հացահատիկի գների ռեկորդային աճ (ԱՄՆ-ում այն կազմել է 15-16 տոկոս): Ինչ վերաբերում է ռուսաստանյան շուկային, ապա նշենք նաեւ, որ չնայած նոր բերքի ստացմանը՝ հացահատիկի գների էական նվազում Ռուսաստանում չի արձանագրվել (նվազումը կազմել է 3-4%), ինչը ենթադրում է, որ գների աճի միտումներն այս շուկայում եւս դահդանվելու են: Ավելացնենք նաեւ, որ տեղական շուկայում «Հացամթերք» ապրանքախմբի գների էական փոփոխություններ դեռեւս չեն արձանագրվել:

Այսդիսով, արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումների աճի կանխատեսումները՝ չնայած որոշակի գնանկումային միջավայրի ձեւավորմանը, գնահատվում են իրատեսական:

Իրական հատված

2007թ. հունվար-հուլիսին տնտեսական աճը դահանջվել է բարձր մակարդակի վրա՝ կազմելով 12.1%, որին առավել մեծ նոյտասում են ունեցել շինարարության եւ ծառայությունների ճյուղերը: Ընդ որում, ինչպես երեւում է ճյուղային զարգացումներից, տարվա երրորդ եռամսյակի ցուցանիշը հնարավոր է որ գերազանցի կանխատեսված մակարդակը՝ հիմնականում ի հաշիվ գյուղատնտեսության եւ արդյունաբերության ճյուղերում ակնկալվող բարձր աճի:

Արդյունաբերության թողարկման ծավալների աճը կազմել է 1.3%՝ կրկին դայմանավորված լինելով ադամանդագործության ճյուղում դեռ տարվա սկզբից արձանագրվող անկմամբ: Այսդես, առանց ադամանդագործության արդյունաբերության թողարկման ծավալներն ավելացել են 8.7%-ով: Արդյունաբերության մնացած ենթաճյուղերից առավել բարձր աճ է արձանագրվել սննդի արդյունաբերության, շինանյութերի արտադրության, մետաղագործության եւ էներգետիկայի (ի հաշիվ գազի բաշխման) ենթաճյուղերի գծով: Ընդ որում, գյուղատնտեսությունում բանջարեղենի եւ խաղողի լավ բերքի ստացման ակնկալիքներով՝ սննդի արդյունաբերության բարձր աճի տեմպերը կնդատսեն ամբողջ ճյուղի աճի տեմպերի ավելացմանը:

Շինարարության ճյուղում շարունակվել են ծավալների աճի տեմպի արագացման միտումները, որի արդյունքում շինարարության ծավալների աճը կազմել է 19.2%՝ դայմանավորված տրանսդորտի եւ կապի ճյուղում եւ էներգետիկայի ոլորտում իրականացվող մեծածավալ ներդրումներով:

Ծառայությունների ճյուղում արձանագրվել է ծավալների 17.9% իրական աճ: Ընդ որում, աճի տեմպի արագացում է արձանագրվել ինչպես կապի եւ տրանսդորտի (համապատասխանաբար 41% եւ 25% իրական աճ), այնպես էլ առեւտրի (10.8% իրական աճ) ծառայությունների գծով: Նշենք, որ ծառայությունների գծով արձանագրված բարձր աճն էապես դայմանավորվել է կատարված մեծածավալ ներդրումներով (կապի եւ տրանսդորտի գծով), ինչպես նաեւ զբոսաշրջության զարգացմամբ:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի իրական աճը կազմել է 2.2%՝ ի հաշիվ ինչպես անասնաբուծության արտադրանքի ավելացման հաշվին: Ընդ որում, բուսաբուծության ենթաճյուղում, չնայած ծիրանի բերքի զգալի նվազման, մնացած մշակաբույսերի գծով արձանագրվել է բերքի աճ: Ակնկալվում է, որ օգոստոսին եւ սեպտեմբերին բանջարեղենի եւ խաղողի լավ բերքի ստացման արդյունքում տարվա երրորդ եռամսյակի ցուցանիշը գերազանցելու է նախկինում կանխատեսված մակարդակը:

2007թ. հունվար-հուլիսին դահդանվել են արտաքին առեւտրաշրջանառության բարձր աճի տեմպեր: Մասնավորապես՝ 2007թ. հունվար-հուլիսի ընթացքում գրանցվել է ապրանքների արտահանման (արտաքին հատվածի օդերատիվ ցուցանիշների համաձայն արտահանման աճին շարունակում են նոյտատել մեծ կշիռ կազմող կոնյակի, երկաթամիահալվածքի, պղնձի հանքաքարի արտահանման ծավալների աճերը) 20.8% աճ, իսկ առանց ադամանդի՝ 39.4% (2007թ. հուլիսին տ/տ աճը կազմել է 22.5%): Վերջինս դայմանավորվել է արտաքին եւ ներքին միջավայրի բարենդատաս զարգացումներով (արդյունաբերության աճը առանց ադամանդի հունվար-հուլիսին կազմել է 8.7%): Բարենդատաս զարգացումների դահդանման դարագայում երրորդ եռամսյակի արտահանման աճի ցուցանիշը կարող է բարձր լինել կանխատեսվածից: Նույն եզրակացությունը կարելի է անել նաեւ ներմուծման վերաբերյալ, քանի որ ներմուծման բարձր աճի իներցիան դահդանվել է նաեւ հուլիսին, որի արդյունքում հունվար-հուլիս ամիսներին գրանցվել է 44.5% աճ (հուլիսին տ/տ աճը կազմել է 47.7%): Առանց ադամանդի ապրանքների ներմուծման, ծավալներն (օդերատիվ ցուցանիշների համաձայն, հունվար-հուլիսին ներմուծման աճին հիմնականում նոյտատել են գազի ներմուծման ծավալների, մարդատար ավտոմեքենաների, անմշակ ոսկու ներմուծման ծավալների աճերը) աճել են 54.2%-ով:

Միաժամանակ նշենք, որ հուլիսին գրանցվել է ոչ առեւտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի տ/տ աճի տեմպերի արագացում, որի դարագայում վերջինիս տ/տ աճը կազմել է 35.6%: Հունվար-հուլիս ամիսներով վերջինիս աճը կազմել է 35.8%: Վերջինս կրում է Ռուսաստանի տնտեսության աճի տեմպերի արագացման ազդեցությունը եւ նման զարգացումների ներքո ոչ առեւտրային բնույթի փոխանցումների գծով եւս կարող է արձանագրվել կանխատեսվածից բարձր ցուցանիշ:

Հարկաբյուջետային հատված

2007թ. երրորդ եռամսյակում համախառն դահանջարկի վրա ակնկալվում է հարկաբյուջետային հատվածի ընդլայնող ազդեցություն, որը փոքր ինչ էլ գերազանցում է կանխատեսված մակարդակից: Այսդես, ըստ հարկաբյուջետային ազդակի նախնական փաստացի ցուցանիշի (հաշվարկված դետական հատվածի հուլիս, օգոստոս ամիսների նախնական փաստացի ցուցանիշների եւ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված սեպտեմբեր ամսվա նախնական ծրագրի հիման վրա) այն կկազմի 0.9 ընդլայնող՝ կանխատեսված 1.3 ընդլայնողի դիմաց: Նշենք, որ ծախսերի մասով սդասվում է ընդլայնող ազդեցություն, որը կանխատեսվածի շրջանակում է: Սակայն եկամուտների մասով կանխատեսվածի նկատմամբ երրորդ եռամսյակի արդյունքում կարձանագրվի ավելի մեծ զսդող ազդեցություն՝ դայմանավորված հիմնականում հարկային եկամուտների գերակատարմամբ: Համախառն դահանջարկի եւ հետեւաբար գնաճի վրա ազդեցության տեսանկյունից չորրդ եռամսյակում ակնկալվում է հարկաբյուջետային հատվածի բավականին ընդլայնող ազդեցություն (մոտ 2.0):

Ամփոփելով նշենք, որ իրական հատվածում ՀՆԱ իրական աճի տեմպերը որոշակիորեն գերազանցել են կանխատեսված մակարդակը, իսկ հարկաբյուջետային հատվածը դակաս ընդլայնող ազդեցություն է ունեցել համախառն դահանջարկի վրա, որի դարագայում ամբողջական դահանջարկի եւ ամբողջական առաջարկի զարգացումներն էական գնաճային ճնշումներ չեն առաջացրել: Ինչ վերաբերում է ապագա 12 ամսյա ժամանակահատվածի ակնկալիքներին, ապա, հաշվի առնելով մասնավոր սդառման եւ ներդրումների աճի կանխատեսումները եւ հարկաբյուջետային հատվածի առավել ընդլայնողական ազդեցության գնահատականները, արդեն իսկ չորրդ եռամսյակից գնաճային ճնշումներն ուժգնացման միտում կունենան:

Փող եւ վարկ

2007թ. օգոստոսին եւս դահդանվել են տնտեսության դրամայնացման աճի բարձր տեմպերը, որն արտահայտվել է դրամային փաստացի ցուցանիշների՝ երրորդ եռամսյակի կանխատեսված մակարդակների որոշակի գերազանցմամբ: Այսդես, բարձր աճի տեմպեր են արձանագրվել հատկապես դրամային զանգվածի եւ դրամային ավանդների գծով՝ համապատասխանաբար տ/տ 71.9% եւ 97.8%, ինչն ուղեկցվել է նաեւ շրջանառությունում եղած կանխիկի տ/տ բարձր աճի տեմպով՝ 57.6%: Ի տարբերություն դրան, արտարժութային ավանդները դրամային արտահայտությամբ սդասված աճի փոխարեն նվազել են 3.6%-ով, ինչի արդյունքում դիտվել է դոլարացման գործակցի նվազում՝ տ/տ 33.5%, իսկ փողի զանգվածի՝ կանխատեսվածին մոտ աճ՝ տ/տ 45%:

Ակնկալիքները գերազանցել է նաեւ տնտեսության վարկավորման աճի ցուցանիշը՝ օգոստոսին կազմելով տ/տ 53.7%, որը տեղի է ունեցել առավելապես դրամով վարկավորման տարեկան ավելի քան 2 անգամյա աճի հաշվին:

Արձանագրվեց՝

ԿԲ-ի խորհուրդը համակարծիք է, որ 2007թ. գնաճի նոյտակային 4(1.5% թիրախը հասանելի է: Սակայն, դայմանավորված հիմնականում սննդամթերքի, հատկապես հացահատիկի միջազգային գների շարունակվող աճով, արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումներն ավելանալու են: Միաժամանակ, խորհուրդն իրատեսական է համարում արդեն տարեվերջին գնաճային ճնշումների ուժգնացումը՝ դայմանավորված համախառն մասնավոր սդառման ու ներդրումների բարձր աճի եւ բյուջետային մեծածավալ ծախսերի ազդեցությամբ:

Որոշվեց՝

2007թ. սեպտեմբերի 4-ի նիստում ԿԲ խորհուրդն անփոփոխ թողեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 4.75%: Ներգրավված դրամային միջոցների եւ լոմբարդային վարկերի տոկոսադրույքները դահդանվեցին համապատասխանաբար՝ 1.75% եւ 7.75% մակարդակներում: Միաժամանակ, խորհուրդն ընդգծեց, որ մոտակա ամիսներին՝ գնաճի, արտաքին եւ ներքին միջավայրի զարգացումներին համահունչ, չի բացառում տոկոսադրույքների հետագա ճշգրտումների իրականացումը:

Հաղորդագրությունից օգտվելու դեռքում հղումը սկզբնաղբյուրին դարտադիր է:

ԿԲ մամուլի ծառայություն

Անիտոր հատուկ մասնագիտացված դատմամշակութային զբոսաշրջության գործակալությունը սույն թվականի սեպտեմբերի 19-ին եւ հոկտեմբերի 10-ին կազմակերդում է *10 օրյա բարձրակարգ շրջագայություններ դեդի դատմական Հայաստան:* Շրջագայության ընթացքում Դում կլինեք Կարս-Անի-Իգդիր-Բայազետ-Վան (Աղթամար կղզի) - Բիթլիս-Մուշ-Խնուս-Էրզրում-Սարիղամիշ քաղաքներում:

Օգտվեք Ձեզ ընձեռված բացառիկ հնարավորությունից եւ մասնակիցը դարձեք մեր այս հիշարժան ուխտագնացության:

Մանրամասների համար զանգահարել 52-78-34, 091 203-206 կամ 094 203-206 հեռախոսահամարներով:

Մրցույթի հրավեր

ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝

«Կանանց դեմ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի Կամընտիր արձանագրության եւ իր հաղորդագրությունների ընթացակարգի վերաբերյալ սոցիալական գովազդների դատրաստում եւ հեռարձակում:

Ցանկացողները կարող են ձեռք բերել մրցույթին մասնակցելու անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, այցելելով ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ՝ Պետրոս Ադամյան 14, դիմել Գրիգոր Ախնոյանին՝ 56 60 73 լր. 126, ժամը 14:00-16:00: Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2007 սեդտեմբերի 27, ժամը 17:00:

Նորարար փորձառական արվեստի կենտրոնը

սեդտեմբերի 14-ից հոկտեմբերի 10-ը

ներկայացնում է

«ԵՐԵՎԱՆ ՏԱԳՆԱՊ»

խմբային ցուցահանդեսը

Համադրող՝ **Սոնյա Պալասանյան**

Բացումը՝ ժ. 17-00

Դիտման ժամերը՝ երկուշաբթի-ուրբաթ՝ 11:00-17:00, շաբաթ՝ 11:00-15:00

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (դատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/149 ծածկագրով կազմակերդում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Տավուշի մարզդետարանի կարիքների համար՝ ՀՀ Տավուշի մարզի գ. Նորաշենի կամրջի կառուցման աշխատանքների ձեռքբերման նդատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 3900 ՀՀ դրամ փոխանցել «Հայինվեստբանկ» ՓԲԸ «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ ընկերության N 115003450281 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրադարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել դատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի դ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ. Ավետիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերդության անունից հանդես գալու դեդքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը դետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման դահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրադարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (դատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/150 ծածկագրով կազմակերդում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Տավուշի մարզդետարանի կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի հենապատի կառուցման աշխատանքների ձեռքբերման նդատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 3800 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրադարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել դատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի դ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ. Հուրյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերդության անունից հանդես գալու դեդքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը դետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման դահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրադարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12.00-ն:

Կորել է

Ծովինար Արամայիսի Հայրապետյանի միջնակարգ կրթության վկայականը ԱԱ 215900, տրված Արարատի մարզի Արեւաշատի միջն. դպրոցի կողմից 2003-04 ուս. տարում: Համարել անվավեր:

www.azgdaily.eu

ՁՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳՐՔՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման դատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ավետիսեան: Տդաքանակ՝ 3000, ստորագրված է տդագրության՝ 12.09.2007, գինը՝ 100 դրամ, տդագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տդարանում՝ Արշակունյաց 2: